# ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ (2001-2016թթ.)

Սամվել Մանուկյան

*սոց.գ.թ., «Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ*

Մարտ, 2018թ.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Նախաբան ..... 3

1 Ադրբեջան եվ Նախիջևան ..... 4

1.1 Ադրբեջանի տնտեսական շրջանները ..... 4

1.2 Նախիջևանի վարչական կառուցվածքը ..... 6

1.3 Ադրբեջանի ՀՆԱ-ն և նավթային արտահանումը ..... 7

2 Նախիջևանի ՀՆԱ դինամիկան ..... 12

3 Նախիջևանի պետական բյուջեն ..... 14

4 Նախիջևանի տնտեսության կառուցվածքը, դինամիկան և տեղաբաշխումը ..... 17

4.1 Կառուցվածքը ..... 17

4.2 Դինամիկան ..... 17

5 Արդյունաբերություն և ներդրումներ ..... 20

5.1 Ֆինանսական ցուցանիշներ ..... 20

5.2 Արդյունաբերության կառուցվածքը ..... 21

5.3 Արդյունաբերության տեղաբաշխումը ..... 23

5.3.1 Օգտակար հանածոներ ..... 23

5.3.2 Էներգետիկա ..... 23

5.3.3 Մեքենաշինություն և մետաղամշակում ..... 24

5.3.4 Թեթև արդյունաբերություն ..... 24

5.3.5 Սննդարդյունաբերություն ..... 24

5.3.6 Փայտամշակում ..... 24

5.3.7 Շինանյութեր ..... 24

6 Կապիտալ ներդրումներ ..... 25

7 Տրանսպորտ ..... 27

7.1 Բեռնափոխադրումներ ..... 27

7.2 Ուղևորափոխադրումներ ..... 28

8 Արտահանում և ներմուծում ..... 31

9 Տուրիզմ ..... 33

10 Ժողովրդագրություն ..... 35

10.1 Բնակչության քանակի գնահատականներ ..... 35

10.2 Նախիջևանի ժողովրդագրական ցուցանիշները ..... 36

10.3 Քաղաքային և գյուղական բնակչություն ..... 39

10.4 Միգրացիա ..... 40

11 Զբաղվածություն ..... 42
11.1 Զբաղվածության ընդհանուր նկարագիրը ..... 42
11.2 Զբաղվածության կառուցվածքը ..... 43
11.3 Նոր աշխատատեղեր ..... 45
12 Աշխատավարձեր ..... 47
13 Նախիջևանի շրջանների համեմատություն ..... 50
13.1 Համեմատություն ըստ տնտեսական ցուցանիշների ծավալների բաշխման ..... 50
13.2 Համեմատություն ըստ բնակչության քանակի հարաբերակցության ..... 50
14 Հետագա աշխատանքների ուղղություններ ..... 52
15 Ամփոփում ..... 54

# ՆԱԽԱԲԱՆ

Նախիջևանի Ինքնավար Հանրապետության արդի վիճակի վերաբերյալ հետազոտությունները բավական սակավ են: Առկա հրապարակումները հիմնականում վերաբերվում են այդ հանրապետությունում տեղի ունեցող ռազմա-քաղաքական գործընթացներին և իրադարձություններին: Ներկայացվող հետազոտության, որը կազմվել է Նախիջևանի, Ադրբեջանի և Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայությունների տվյալների հիման վրա, նպատակն է վերացնել այդ բացը:

Հետազոտությունում ներկայացված է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը և դրա դինամիկան 2000-2016 թթ.: Տվյալների հասանելիության դեպքում տրված են 2017 թ. տվյալները: Դիտարկվել են Նախիջևանի ՀՆԱ-ն, բյուջեն, արտահանումն ու ներմուծումը, արդյունաբերությունը, կապիտալ ներդրումների ծավալն ու կառուցվածքը, տրանսպորտը, տուրիզմը, զբաղվածությունը, աշխատավարձերը: Իրականացվել է բնակչության քանակի և ժողովրդագրական միտումների գնահատում: Նախիջևանի սոցիալ-տնտեսական վիճակի դինամիկան մի կողմից համեմատվել է Ադրբեջանում առկա դինամիկայի հետ, իսկ մյուս կողմից, տվյալների առկայության դեպքում՝ իրականացվել է Նախիջևանի Ինքնավար հանրապետության շրջանների համեմատություն: Մի շարք դեպքերում իրականացվել է նաև Հայաստանի համապատասխան ցուցանիշների հետ:

Մանաթով չափվող ցուցանիշներն ընկալելի դարձնելու համար դրանք վերահաշվարկվել են դոլարով՝ կիրառելով Ադրբեջանի Կենտրոնական բանկի տարեկան միջինացված փոխարժեքները: Մանաթով տվյալներ չեն ներկայացվել նաև այն պատճառով, որ 2015-2016թթ. ընթացքում Ադրբեջանում մանաթն արժեզրկվել է 1 դոլարի դիմաց 0.784-ից մինչև 1.700 մանաթ: Մանաթով դիտարկման դեպքում կառաջանային դրամական ցուցանիշների դինամիկայի թյուրընկալումներ հատկապես վերջին առավել կարևոր երկու տարիների դեպքում:

**Իրականացված վերլուծությունները թույլ են տվել նույնականացնել Նախիջևանի զարգացման հիմնական ուղղությունները, ինչպես նաև սոցիալ-տնտեսական վիճակի թույլ կողմերը: Այդ արդյունքների հիման վրա նախատեսվում է հետագա ուսումնասիրությունների թիրախավորում:**

# 1 ԱԴՐԲԵՋԱՆ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆ

## 1.1 ԱԴՐԲԵՋԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԸ

Ըստ Ադրբեջանի վիճակագրական ծառայության Ադրբեջանը կազմված է 66 շրջանից և հանրապետական ենթակայության 12 քաղաքից (ներառյալ Նախիջևանի Ինքնավար Հանրապետության շրջանները, Նախիջևան քաղաքը, Արցախի կազմ անցած շրջանները, Ստեփանակերտ և Շուշի քաղաքներն)։ Շրջանների բաժանումը մնացել է խորհրդային ժամանակաշրջանից։

Ադրբեջանում կա 2698 համայնք։ Բաքուն և Գյանջան ունեն քաղաքային շրջաններ։

Հանրապետական ենթակայության քաղաքներն են՝ Բաքու, Գյանջա, Եվլախ, Լենքորան, Մինգեչաուր, Նավթալան, Նախիջևան, Ստեփանակերտ (Խանքենդի), Սումգայիթ, Շեքի, Շիրվան, Շուշի։

Ադրբեջանը բաժանված է 10 տնտեսական շրջանների։ Բաքուն երբեմն դիտարկվում է որպես առանձին՝ 11-րդ տնտեսական շրջան։

Ադրբեջանի տնտեսական շրջանների բնակչությունը և տարածքները տրված են ստորև՝ **Error! Reference source not found.**-ում, իսկ քարտեզը՝ Նկար 1-ում։

Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունը, հետագա տեքստում՝ Նախիջևան, տարածքի չափերով 9-րդն է, իսկ բնակչության թվաքանակով՝ 8-րդը։

| Համարը քարտեզի վրա | Տնտեսական շրջան | Մակերեսը, կմ² | Մակերեսը, % | Բնակչության պաշտոնական քանակը, 2015 թ. 1000 մարդ | Բնակչության պաշտոնական քանակը, 2015թ. , % |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ապշերոնյան ՏՇ | 3730 | 4.3% | 552 | 5.8% |
| 2 | Գյանջա-Ղազախի ՏՇ | 12300 | 14.2% | 1241 | 12.9% |
| 3 | Շեքի-Զաքաթալայի ՏՇ | 8840 | 10.2% | 600 | 6.3% |
| 4 | Լենքորանի ՏՇ | 6070 | 7.0% | 893 | 9.3% |
| 5 | Գուբա-Խաչմազի ՏՇ | 6960 | 8.0% | 526 | 5.5% |
| 6 | Առանի ՏՇ | 21150 | 24.4% | 1936 | 20.2% |
| 7 | Վերին Ղարաբաղի* ՏՇ | 7330 | 8.5% | 654 | 6.8% |
| 8 | Քելբաջար-Լաչինի* ՏՇ | 6420 | 7.4% | 244 | 2.5% |
| 9 | Լեռնային Շիրվանի ՏՇ | 6130 | 7.1% | 304 | 3.2% |
| 10 | Նախիջևանի ՏՇ | 5500 | 6.4% | 440 | 4.6% |
| 11 | Բաքու | 2140 | 2.5% | 2204 | 23.0% |
| 12 | Ընդամենը | 86570 | 100.0% | 9593 | 100.0% |
| *** - Ադրբեջանում անվանափոխված են** | | | | | |

*Աղյուսակ 1*

## Ադրբեջանի տնտեսական տարածաշրջանները




| | | | |
|---|---|---|---|
| 1. Ապշերոնյան | 2. Գյանջա-Ղազախ | 3. Շեքի-Զաքաթալա | 4. Լենքորան |
| 5. Գուբա-Խաչմազ | 6. Առան | 7. Վերին Ղարաբաղ | 8. Քելբաջար-Լաչին |
| 9. Լեռնային Շիրվան | 10. Նախիջևան | | |

*Նկար 1*

## 1.2 ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ադրբեջանի Հանրապետության 2004թ. մարտի 19-ի օրենքին համապատասխան՝ մասնակի փոփոխություններ են մտցվել Նախիջևանի Ինքնավար Հանրապետության **Բաբեկի** և **Շարուրի** շրջանների վարչատարածքային բաժանման մեջ և ստեղծվել է նոր շրջան՝ **Կենգերլիի** շրջանը:

Նախիջևանը կազմված է 7 շրջանից և մեկ հանրապետական նշանակության քաղաքից:

| Համարը քարտեզի վրա | Ադմինիստրատիվ տարածք | Շրջկենտրոն | Մակերեսը, կմ² | Բնակչության պաշտոնական քանակը, 2018 թ., 1000 մարդ | Բնակչության քանակը՝ գնահատական 2018 թ., 1000 մարդ | Համայնքների քանակը |
|---|---|---|---|---|---|---|
| **1** | Բաբեկի շրջան | Բաբեկ | 902 | 75.0 | 55.1 | 40 |
| **2** | Ջուլֆայի շրջան | Ջուլֆա | 1000 | 46.4 | 34.1 | 25 |
| **3** | Կենգերլիի շրջան | Ղվրաղ | 682 | 32.2 | 23.7 | 11 |
| **4** | Նախիջևան քաղաք | - | 15 | 93.0 | 68.4 | - |
| **5** | Օրդուբադի շրջան | Օրդուբադ | 972 | 49.7 | 36.5 | 45 |
| **6** | Սադարակի շրջան | Սադարակ | 151 | 15.9 | 11.7 | 3 |
| **7** | Շահբուզի շրջան | Շահբուզ | 815 | 25.1 | 18.4 | 25 |
| **8** | Շարուրի շրջան | Շարուր | 811 | 115.5 | 84.9 | 64 |
| **Ընդամենը՝ Նախիջևանի Ինքնավար Հանրապետություն** | | | **5500** | **452.8** | **332.8** | **213** |

*Աղյուսակ 2.*




*Նկար 2*

Ըստ տարածքի ամենամեծ շրջաններն են՝ **Ջուլֆայի**, **Օրդուբադի** և **Բաբեկի** շրջանները, իսկ ամենափոքրը՝ **Սադարակի** շրջանը, որը մոտ 6 անգամ զիջում է դրանց իր մակերեսով: Բնակչության քանակով ամենամեծն է **Շարուրի** շրջանը, երկրորդն է **Նախիջևան** քաղաքը: Բնակչության քանակով ամենափոքրն են **Սադարակի**, **Շահբուզի** և **Կենգերլիի** շրջանները:

## 1.3 ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀՆԱ-Ն ԵՎ ՆԱՎԹԱՅԻՆ ԱՐՏԱՀԱՆՈՒՄԸ

Նախիջևանի սոցիալ-տնտեսական վիճակի առավել ադեկվատ ընկալման համար կարևոր է դրանք դիտարկել Ադրբեջանի կոնտեքստում: Որպես այդպիսի կոնտեքստ դիտենք 2001-2016 ժամանակահատվածում հետևյալ ցուցանիշների դինամիկան.

1. Ադրբեջանի ՀՆԱ-ն,
2. Ադրբեջանի ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով,
3. Ադրբեջանի ընդհանուր և ածխաջրածնային արտահանման ծավալը,
4. Արտահանման և ներմուծման կառուցվածքը,
5. Դոլար/մանաթ հարաբերակցությունը և
6. Brent տեսակի նավթի համաշխարհային գների դինամիկան[1]:

Ադրբեջանի ՀՆԱ-ի, արտահանման և արտահանման կազմում ածխաջրային արտահանման մասնաբաժնի դինամիկան 2001-2016-ին տրված է Գծապատկեր 1-ում: Գծապատկերում կարևոր նշանակություն ունեցող տվյալները ներառված են էլիպսներում:




*Գծապատկեր 1*

Գծապատկերի տվյալների առաջին առանձնահատկությունը կապված է 2008թ. գլոբալ ֆինանսական ճգնաժամի հետ: Ծայրամասային երկրների, մասնավորապես՝ Ադրբեջանի և Հայաստանի վրա այն իր ազդեցությունն ունեցավ 2009 թվականին: Հայաստանում 2009թ. ՀՆԱ անկումը 2008-ի համեմատ կազմեց մոտ 14%, իսկ նոմինալ արժեքով վերականգնումը տեղի ունեցավ միայն 2014-ին:

Գծապատկերից երևում է, որ Ադրբեջանում կանխատեսել են ճգնաժամի ազդեցությունը, և 2008-ին ածխաջրածնային արտահանման հաշվին ընդհանուր արտահանումն ավելացրել են մոտ 8 անգամ՝ 6.1 միլիարդ դոլարից հասցնելով մինչև 47.8 միլիարդ դոլարի, ստեղծելով անվտանգության բարձիկ հետագա տարիների համար: Դրա հետևանքով Ադրբեջանում ՀՆԱ

[1] Հետագայում նախատեսվում է իրականացնել Նախիջևանի սոցիալ-տնտեսական վիճակի համեմատությունն Ադրբեջանի մյուս տնտեսական շրջանների հետ:

անկումը կազմել է 9.5%, իսկ վերականգնումը տեղի է ունեցել հաջորդ՝ 2010թ.-ին, երբ նավթի գները (80 $/բարել, տե՛ս Գծապատկեր 2) դեռ ցածր էին 2008-ի գներից (97 $/բարել)։ Եթե 2008-ին տեղի չունենար նավթի վաճառքի ծավալի նման աննախադեպ աճ, ապա ակնհայտ է, որ Ադրբեջանում տեղի կունենար տնտեսական և սոցիալական կոլապս՝ անկանխատեսելի հետևանքներով։

- **Այս դրվագը մատնանշում է, որ Ադրբեջանում առկա է ադեկվատ տնտեսական կանխատեսումների ունակ վերլուծական ներուժ։**

Գծապատկեր 1-ից հաջորդ հետևությունն այն է, որ.

- **Սկսած 2009-ից Ադրբեջանը սկսել է աստիճանաբար նվազեցնել իր կախվածությունը նավթային արտահանումից։**

Դրա մասին է վկայում այն, որ 2008-2015 ժամանակահատվածում ածխաջրածնային արտահանման մասնաբաժինն Ադրբեջանի ընդհանուր արտահանման մեջ նվազել է 97.1%-ից մինչև 87.2%:

2015-2017 ժամանակահատվածում արտահանման կառուցվածքում էներգակիրների մասնաբաժնի աճը հետևանք է ԱՄՆ-ի կողմից Ռուսաստանի նկատմամբ պատժամիջոցների շարքում նավթի գների նվազեցման քաղաքականության, որն իր բացասական ազդեցությունն է ունեցել բոլոր նավթ արդյունահանող երկրների, այդ թվում նաև Ադրբեջանի տնտեսական ցուցանիշների վրա[2]։

Գծապատկեր 1-ի տվյալներից երևում է, որ 2017-ին վիճակը բարելավվել է՝ տեղի է ունեցել ՀՆԱ աճ։ Ներկա ժամանակահատվածում դժվար է կանխատեսել, թե ինչպիսին կարող են լինել նավթի գների հետագա փոփոխությունները, քանի որ դրանք մեծապես կախված են ԱՄՆ գլոբալ աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական ռազմավարություններից։ Հետևաբար, կարելի է ձևակերպել հիպոթեզ, որ.

- **Նավթի գների կայունացումը և դրա հետ կապված՝ ՀՆԱ աճի միտումն Ադրբեջանում հանդիսանում են Ադրբեջանում արտահերթ նախագահական ընտրությունների անցկացման որոշման գործոններից մեկը. ընթացիկ իշխանությունների համար տնտեսական վերելքի փուլում ընտրությունների անցկացումը շահեկան է։**

Գծապատկեր 2-ում տրված է Ադրբեջանի ՀՆԱ բացարձակ արժեքի և Brent տեսակի նավթի բարելի գնի դինամիկան 2001-2017 ժամանակահատվածում։ Այդ գծապատկերի տվյալների հիման վրա կատարված մաթեմատիկական մոդելավորումը ցույց է տվել, որ Ադրբեջանի ՀՆԱ բացարձակ արժեքի տատանումների 88%-ը բացատրվում է նավթի գնի տատանումներով։ Մասնավորապես.

- **Նավթի 1 բարելի գնի բարձրացումը 1 դոլարով Ադրբեջանի ՀՆԱ-ն մեծացնում է 721 միլիոն դոլարով։**

Գծապատկեր 3-ում տրված է 2001-2016թթ. $/մանաթ հարաբերության և Brent տիպի նավթի 1 բարելի գնի դինամիկան 2001-2016 ժամանակահատվածում։ Ինչպես երևում է գծապատկերի տվյալներից, 2008-2009թթ. գլոբալ ճգնաժամի ընթացքում Ադրբեջանը կարողացել է պահպա-

[2] Նշենք նաև, որ ՌԴ-ի նկատմամբ պատժամիջոցները խիստ բացասաբար ազդեցին նաև Հայաստանի վրա՝ մասնավոր տրանսֆերտները Ռուսաստանից Հայաստան նվազեցին 2013-ին 1.73 միլիարդ դոլարից մինչև 1.1 միլիարդ 2015-ին և 0.9 միլիարդ 2016-ին։

նել մանաթի փոխարժեքը, որը կարևոր նշանակություն ունի երկրում գների կայունության տեսակետից, ինչն էլ իր հերթին կարևոր է ներհասարակական կայունության պահպանման տեսակետից:

Սակայն Ադրբեջանը չի կարողացել հաղթահարել 2015-ից նավթի գների անկման բացասական ազդեցությունը, և տեղի է ունեցել մանաթի արժեզրկում, որն էլ, իր հերթին, ինչպես ցույց կտրվի զեկույցի հաջորդ հատվածներում, խիստ վատթարացրել է մի շարք տնտեսական և սոցիալական ցուցանիշներ: Հետևաբար, պետք է ենթադրել, որ.

- **2015-2016թթ. Ադրբեջանում տեղի է ունեցել սոցիալական լարվածության աճ, և 2017-ին նկատված մի փոքր բարելավման միտման օգտագործումը ունի քաղաքական նշանակություն՝ հետագա անորոշություններից խուսափելու համար:**




*Գծապատկեր 2*




*Գծապատկեր 3*

Գծապատկեր 3-ում տրված է Ադրբեջանի ընդհանուր արտահանման, ներմուծման և արտաքին առևտրի բալանսի դինամիկան 2001-2017 ժամանակահատվածում: Գծապատկերը մանրամասնում է 2008 և 2017թթ. արտաքին առևտրի նշանակությունն Ադրբեջանի տնտեսության համար: Մասնավորապես, 2008-ին արտաքին առևտրի 40.6 միլիարդ դոլար դրական բալանսը կարևոր նշանակություն է ունեցել Ադրբեջանում տնտեսական և սոցիալական վիճակի պահպանման համար: Երկրորդ՝ 2016-ին արտաքին առևտրի դրական բալանսը նվազել է մինչև 600 միլիոն դոլար, իսկ 2017-ին աճել է մինչև 5.0 միլիարդ դոլար:

Եթե համեմատենք Հայաստանի և Ադրբեջանի արտաքին առևտրի արդյունքները, ապա 2001-2017թթ. Ադրբեջանն արտաքին առևտրից ստացել է 131.2 միլիարդ դոլար ֆինանսական ներհոսք, իսկ Հայաստանը՝ 30.5 միլիարդ դոլար ֆինանսական արտահոսք:




*Գծապատկեր 4*

Ադրբեջանի 2017-ի արտահանման կառուցվածքում նավթը կազմել է՝ 77.5%, նավթամթերքը՝ 2.5% և բնական գազը՝ 8.6% (Գծապատկեր 5): Բացի ածխաջրածնային արտահանումից՝ էական մասնաբաժին ունի բանջարաբոստանային մշակաբույսերի (3.6%), ալյումինիումի 0.9%, պլաստմասսաների (0.7%) և սև մետաղների (0.6%) արտահանումը:

Նույն 2017-ին Ադրբեջանի ներմուծման մեջ առավել նշանակալի մասնաբաժինը կազմել է մեքենաների, ապարատների, սարքավորումների և դրանց պահեստամասերի ներմուծումը (21.3%), պարենամթերքը (16.0%), տրանսպորտային միջոցները և դրանց պահեստամասերը (12.3%), սև մետաղները (10.1%) (Գծապատկեր 6):




*Գծապատկեր 5*




*Գծապատկեր 6*

# 2 ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀՆԱ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Նախիջևանի ՀՆԱ և Ադրբեջանի ՀՆԱ կազմում դրա մասնաբաժնի դինամիկայի դիտարկումը, որը տրված է Գծապատկեր 7-ում, թույլ է տալիս եզրակացնել, որ.

- **2000-2017թթ. ընթացքում Ադրբեջանը, որպես կանոն, ձգտել է համեմատաբար ավելի ինտենսիվ զարգացնել Նախիջևանը և այդ ուղղությամբ հասել է հաջողությունների:**

Եթե 2000-ին Նախիջևանի ՀՆԱ-ն կազմել է Ադրբեջանի 1.8%-ը, ապա 2004-ին այն բարձրացել է մինչև 2.7%: Հաջորդ՝ 2005-2008 փուլում, չնայած բացարձակ մեծությամբ աճին, այդ ցուցանիշը նվազել է մինչև 2.0%:

Նախիջևանի ինտենսիվ զարգացման վերջին փուլը սկսվել է 2011-ին: 2009-2014-ին Նախիջևանի ՀՆԱ-ն աճել է մինչև Ադրբեջանի ՀՆԱ 4.1%-ը: Չնայած 2014-2016-ի ճգնաժամին բացարձակ արժեքով այն կրճատվել է մոտ 50%-ով, սակայն Նախիջևանի ՀՆԱ մասնաբաժինն Ադրբեջանի ՀՆԱ կազմում մնացել է նույն՝ 4.1% մակարդակին: Այսինքն՝

- **Չնայած 2015թ. նավթի գների անկումն էապես ազդել է Նախիջևանի տնտեսական և սոցիալական բոլոր ցուցանիշների վրա, սակայն Նախիջևանի զարգացման գերակայությունն Ադրբեջանի համար չի փոխվել:**




*Գծապատկեր 7*

Ադրբեջանի ներքին քաղաքականությունում Նախիջևանի կարևորության աճի մեկ այլ հիմնավորում արտապատկերված է Գծապատկեր 8-ում: Այստեղ ներկայացված են՝ 2000-2017 թթ. ընթացքում Ադրբեջանի ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով, Նախիջևանի ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով և Նախիջևանի 1 շնչի հաշվով ՀՆԱ հարաբերությունը Ադրբեջանի նույն ցուցանիշին՝ տոկոսային արտահայտությամբ:

Գծապատկերում նորից արտապատկերվում են վերը նշված ժամանակահատվածները: Սակայն, հավելյալ ինֆորմացիան այն է, որ 2000-2004 ժամանակահատվածում այդ հարաբերու-

թյունը 40%-ից հասել է 60%-ի, 2009-2014 ժամանակահատվածում՝ 62%-ից՝ 89%-ի, իսկ 2015թ. մինչև 65% անկումից հետո այդ հարաբերությունը 2016-2017թթ. ընթացքում նորից կտրուկ աճել է մինչև 88%:




*Գծապատկեր 8*

# 3 ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

Նախ՝ դիտենք Ադրբեջանի և Նախիջևանի պետական բյուջեների մի քանի համեմատություններ.

- **Նախիջևանի բյուջեն 2016-ին կազմել է 348.4 միլիոն մանաթ** կամ՝ **204.9 միլիոն դոլար**:
- **Ադրբեջանի պետբյուջեն կազմում է Ադրբեջանի ՀՆԱ 25%-ը (2016):**
- **Նախիջևանի բյուջեն կազմում է Նախիջևանի ՀՆԱ 14.0%-ը (2016) կամ՝ Ադրբեջանի ցուցանիշի 56.0%-ը:**
- **Ադրբեջանի բյուջեն 1 շնչի հաշվով՝ 989 դոլար (2016):**
- **Նախիջևանի բյուջե 1 շնչի հաշվով՝ 461 դոլար (2016) կամ՝ Ադրբեջանի ցուցանիշի 46.6%-ը:**
- **Հայաստանի պետբյուջեն 1 շնչի հաշվով՝ 834 դոլար (2016)**
- **Հայաստանի պետբյուջեն կազմում է ՀՆԱ 23.1%-ը:**

**Նախիջևանը դոտացիոն տարածաշրջան է՝** Նախիջևանի բյուջետային մուտքերի միայն 20%-ն է (**40.9 միլիոն դոլար կամ՝ Նախիջևանի ՀՆԱ 2.7%-ը**) կազմավորվում ներքին աղբյուրների հաշվին, իսկ 80%-ը (164.1 միլիոն դոլար) տրամադրվում է Ադրբեջանի բյուջեից:




*Գծապատկեր 9*

Նախիջևանում հարկային բեռը հիմնականում կրում է բնակչությունը, որը վճարում է բոլոր հարկային մուտքերի 92%-ը (Գծապատկեր 9), այդ թվում՝ **ավելացված արժեքի հարկը կազմում է ներքին բյուջետային մուտքերի 55.9%-ը**, իսկ **եկամտահարկը ֆիզիկական անձանցից՝**

**26.3%-ը:** Այդ հարկատեսակներից է կազմավորվում Նախիջևանի ներքին բյուջետային մուտքերի 82.2%-ը[3] (33.6 միլիոն դոլար):

Անհատ ձեռներեցներից հավաքագրվող հարկերը կազմում են մուտքերի 3.1%-ը: Իսկ իրավաբանական անձանց շահութահարկը կազմում է մուտքերի 1.2%-ը, (0.5 միլիոն դոլար)[4], որը վկայում է կամ տնտեսության ցածր արտադրողականության, կամ ստվերի շատ մեծ ծավալի մասին:

Աղյուսակ 3-ում տրված են Նախիջևանի բյուջեի մուտքերի ցուցանիշները: Աղյուսակի 4-րդ և 5-րդ սյուներում տրված են յուրաքանչյուր մուտքային աղբյուրի տոկոսային արժեքները համապատասխանաբար Նախիջևանում հավաքագրվող ընդհանուր մուտքերից և Նախիջևանի ամբողջ բյուջետային մուտքերից, ներառյալ սուբսիդիաները:

Աղյուսակ 4-ում տրված են Նախիջևանի բյուջեի ծախսային ցուցանիշները: Այդ աղյուսակի 5-րդ և 6-րդ սյուներում տրված են Հայաստանի 2016թ. պետբյուջեի ծախսային ցուցանիշները համապատասխանաբար դրամներով և տոկոսներով՝ բոլոր ծախսերից: Ծախսային աղյուսակում աչքի են ընկնում մի քանի կառուցվածքային առանձնահատկություններ:

- Նախիջևանի բյուջեում ամենամեծ ծախսային կետը **կրթության ոլորտն է,** որին հատկացվում է բյուջետային ծախսերի 26.7%-ը, Հայաստանում այն կազմում է 8.5%:
- Նախիջևանում **դատական համակարգի և հասարակական կարգի պաշտպանությանը** հատկացվում է 15.4%-ը, իսկ Հայաստանում՝ 8.3%-ը:
- Նախիջևանում **առողջապահության** ոլորտին հատկացվում է բյուջեի 10.5%-ը, իսկ Հայաստանում՝ 6.1%-ը:

[3] Համեմատության համար նշենք, որ ՀՀ 2016թ. բյուջեում այդ եկամուտները կազմել են հարկային եկամուտների 63.4%-ը:
[4] Շահութահարկը Հայաստանի 2016թ. բյուջեում կազմել է 11.8%:

| Մուտքերի աղբյուրներ (2016) | Մանաթ | Դոլար | %, Ընդ.-ից | % Հարկային մուտքերից |
|---|---|---|---|---|
| Ընդամենը, հարկեր | **69,500,000.0** | **39,265,536.7** | **19.9%** | **100.0%** |
| Այդ թվում | | | | |
| Եկամտահարկ ֆիզիկական անձանցից | 18,310,000.0 | 10,344,632.8 | 5.3% | 26.3% |
| Շահութահարկ՝ իրավաբանական անձանցից | 850,000.0 | 480,226.0 | 0.2% | 1.2% |
| Հողի հարկ իրավաբանական անձանցից | 150,000.0 | 84,745.8 | 0.0% | 0.2% |
| Գույքահարկ, իրավաբանական անձանցից | 750,000.0 | 423,728.8 | 0.2% | 1.1% |
| Ավելացված արժեքի հարկ | 38,870,000.0 | 21,960,452.0 | 11.2% | 55.9% |
| *Այդ թվում* | | | | |
| *ԱԱՀ՝ Նախիջևան ներկրումից* | *4,880,000.0* | *2,757,062.1* | *1.4%* | *7.0%* |
| Պարզեցված հարկ | 2,120,000.0 | 1,197,740.1 | 0.6% | 3.1% |
| Ակցիզային հարկ | 1,000,000.0 | 564,971.8 | 0.3% | 1.4% |
| *Այդ թվում* | | | | |
| *Ակցիզային հարկ՝ Նախիջևան ներկրված ապրանք.* | *600,000.0* | *338,983.1* | *0.2%* | *0.9%* |
| Ճանապարհային հարկ | 350,000.0 | 197,740.1 | 0.1% | 0.5% |
| *Այդ թվում* | | | | |
| *Ճանապարհային հարկ՝ օտարերկրյա պետ. քաղ.-ից* | *350,000.0* | *197,740.1* | *0.1%* | *0.5%* |
| Բնօգտագործման հարկ | 100,000.0 | 56,497.2 | 0.0% | 0.1% |
| Մաքսատուրքեր | 1,130,000.0 | 638,418.1 | 0.3% | 1.6% |
| Պետական տուրքեր | 3,670,000.0 | 2,073,446.3 | 1.1% | 5.3% |
| Մուտքեր բյուջետային հիմնարկների ծառայություններից | 2,000,000.0 | 1,129,943.5 | 0.6% | 2.9% |
| Այլ հարկային մուտքեր | 200,000.0 | 112,994.4 | 0.1% | 0.3% |
| Սուբսիդիաներ | **278,900,000.0** | **157,570,621.5** | **80.1%** | - |
| **Ընդամենը** | **348,400,000.0** | **196,836,158.2** | **100.0%** | - |

*Աղյուսակ 3*

| Ծախսային ուղղություն (2016) | Մանաթ | Դոլար | %, ընդա-մենից | ՀՀ, միլի-արդ դրամ | ՀՀ %, ընդ-ից |
|---|---|---|---|---|---|
| **Ընդամենը** | **348,400,000.0** | **196,836,158.2** | **100.0%** | **-** | **-** |
| Ընդհանուր հանրային ծախսեր | 35,890,348.0 | 20,277,032.8 | 10.3% | 292.1 | - |
| Պաշտպանություն | 9,175,747.0 | 5,184,037.9 | 2.6% | 225.9 | 15.6% |
| Դատական համակարգ, հասարակական կարգի պահպանություն | 53,778,196.0 | 30,383,161.6 | 15.4% | 120.3 | 8.3% |
| Կրթություն | 93,042,544.0 | 52,566,409.0 | 26.7% | 122.4 | 8.5% |
| Առողջապահություն | 36,611,328.0 | 20,684,366.1 | 10.5% | 88.6 | 6.1% |
| Սոցիալական պաշտպանություն և ապահովում | **17,844,132.0** | 10,081,430.5 | 5.1% | 396.8 | 27.4% |
| Մշակույթ, արվեստ, սպորտ | 13,747,898.0 | 7,767,174.0 | 3.9% | 26.6 | - |
| Բնակարանային-կոմունալ սպասարկում | 20,509,726.0 | 11,587,415.8 | 5.9% | - | - |
| Անասնաբուժություն, մելիորացիա, անտառային տնտեսություն, բնապահպանություն, այլ գործունեություն | 30,137,453.0 | 17,026,809.6 | 8.7% | 4.5 | - |
| Շինարարություն և օգտակար հանածոներ | 17,950,200.0 | 10,141,355.9 | 5.2% | - | - |
| Տրանսպորտ և կապ | 13,032,500.0 | 7,362,994.4 | 3.7% | - | - |
| Տնտեսական գործունեություն | 500,000.0 | 282,485.9 | 0.1% | 131.1 | 9.0% |
| Հիմնական ուղղությունների հետ չկապված ծախսեր | 6,179,928.0 | 3,491,484.7 | 1.8% | 15.1 | - |

*Աղյուսակ 4*

# 4 ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

## 4.1 ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Նախիջևանի ՀՆԱ կառուցվածքում ամենամեծ մասնաբաժինը պատկանում է մշակող արդյունաբերությանը՝ 27.8% ,և մեծածախ ու մանրածախ առևտրին՝ 25.8%, որոնք միասին տալիս են ՀՆԱ 53.6%-ը: Երրորդ նշանակալի ճյուղն է շինարարությունը՝ 20.7%, չորրորդը՝ գյուղատնտեսությունը՝ 11.2% (Գծապատկեր 10):




*Գծապատկեր 10*

## 4.2 ԴԻՆԱՄԻԿԱՆ

Նախիջևանում **արդյունաբերությունը** 2005-2016-ին եղել է ամենաինտենսիվ զարգացող ոլորտը, որի մասնաբաժինը ՀՆԱ-ում այդ ժամանակահատվածում 8.2%-ից հասել է 27.8%-ի (Գծապատկեր 11): Նույն ժամանակահատվածում գյուղատնտեսության մասնաբաժինը 22.1%-ից նվազել է մինչև 11.2%:

Նախիջևանի տնտեսության կառուցվածքի դինամիկան ունի հետևյալ առանձնահատկությունները.

- Նշանակալիորեն աճել է արդյունաբերության տեսակարար կշիռը,
- Նշանակալիորեն նվազել է գյուղատնտեսության տեսակարար կշիռը,
- Նշանակալիորեն նվազել է սոցիալական ծառայությունների կշիռը (չշփոթել թոշակների և նպաստների հետ):




*Գծապատկեր 11*

Գծապատկեր 12-ում տրված են Նախիջևանի և Հայաստանի տնտեսության կառուցվածքները 2004 և 2016 թվականներին: Այդ 12 տարիների ընթացքում տեղի են ունեցել հետևյալ կառուցվածքային փոփոխությունները.

- Նախիջևանում աճել է **արդյունաբերության** տեսակարար կշիռը ի հաշիվ գյուղատնտեսության, շինարարության և ծառայությունների տեսակարար կշիռների նվազման:
- Հայաստանում աճել է **ծառայությունների** տեսակարար կշիռը ի հաշիվ արդյունաբերության, գյուղատնտեսության և շինարարության տեսակարար կշիռների նվազման:




*Գծապատկեր 12*

Ընդհանուր հետևությունն այն է, որ.

- **Նախիջևանում 2004-2016թթ. տեղի է ունեցել տնտեսության արդյունաբերականացում**

- **Հայաստանում 2004-2016թթ. տեղի է ունեցել տնտեսության ապաարդյունաբերականացում:**

Հայաստանի վերաբերյալ եզրակացությունը հիմնված է նաև ծառայությունների ոլորտի կառուցվածքի վրա: Եթե այդ կառուցվածքում գերակշիռ զարգացում ունեցած լինեին բարձր արտադրողական ոլորտները, ապա եզրակացությունը կլիներ, որ Հայաստանն անցել է պոստ-ինդուստրիալ երկրների շարքը: Սակայն իրականությունը **դեռևս** այդպիսին չէ[5]:

[5] Հայաստանում ծառայությունների ոլորտի կառուցվածքի և դրա դինամիկայի հետազոտությունը դուրս է ներկայացվող զեկույցի հիմնական բովանդակության շրջանակներից: Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ Հայաստանում վերջին 10 տարիներին ծրագրավորման ոլորտի բուռն զարգացումն ունակ է աստիճանաբար փոխելու ծառայությունների ոլորտի բնույթը: Սակայն դրա զարգացման աստիճանը դեռևս խիստ անբավարար է, որպեսզի խոսվի Հայաստանում ծառայությունների ոլորտի կառուցվածքի էական փոփոխությունների մասին: Մասնավորապես, 2016-ին տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական ծառայությունների ոլորտի ծավալը ծառայությունների կառուցվածքում կազմել է 5.1% (2012թ. համեմատ աճել է 82%-ով), որի կազմում 4.7%-ը տեղեկատվական տեխնոլոգիաներն են:

# 5 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Նախիջևանի արդյունաբերության նկարագրությունը կատարվել է երկու տեսակետից.

- Արդյունաբերության ֆինանսական ծավալի ու ներդրումների ծավալի և
- Արդյունաբերության կառուցվածքի:

## 5.1 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախիջևանում 2000-2013թթ. արդյունաբերության ծավալի արդեն նշված աճը հաղորդակցվել է ներդրումների աճի հետ: Ընդ որում, բոլոր տարիներին ներդրումների ծավալն ավելի մեծ էր, քան արդյունաբերության ծավալը: 2011թ. ներդրումների ընդհանուր ծավալն անցել է մեկ միլիարդ դոլարի սահմանը՝ կազմելով 1.03 միլիարդ դոլար, իսկ արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 862 միլիոն դոլար: Ներդրումների ծավալն իր առավելագույնին է հասել 2013-ին՝ 1.32 միլիարդ դոլար, իսկ արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 2014-ին՝ 1.14 միլիարդ դոլար:




*Գծապատկեր 13*

Նշենք, որ Գծապատկեր 10-ի արդյունաբերության և գյուղատնտեսության ծավալներն ավելի փոքր են, քան Գծապատկեր 13-ում, քանի որ վերջինում՝ արդյունաբերության արտադրանքի ծավալում ներառված են նաև դրա ստացման համար այլ ոլորտներում ստեղծված ավելացված արժեքները, այսինքն՝ առկա է կրկնակի հաշվարկ: Գծապատկեր 10-ում տրված է ոլորտներում ստեղծված բուն ավելացված արժեքը:

Նախիջևանում արդյունաբերական ինտենսիվ զարգացման սկիզբը պետք է համարել 2003-ը, երբ այստեղ կտրուկ աճեց ներդրումների տեսակարար կշիռը ՀՆԱ կազմում, որը մեկ տարի առաջ (2002) կազմել էր 13%, իսկ 2003-ին դարձավ 38%: Դրանից հետո՝ 2003-2017-ին, ներդրումների ծավալը կազմել է տարեկան միջինը ՀՆԱ 41%:

Համեմատության համար նշենք, որ **Հայաստանում 2013-ին ներդրումների ծավալը կազմել է ՀՆԱ 11.2%, 2014-ին՝ 10.5%, իսկ 2015-ին՝ 10.8%:**

Երեք տարի հետո՝ 2006-ին, Նախիջևանում արդյունաբերության մասնաբաժինը ՀՆԱ կազմում 11%-ից հասավ 17%-ի, 2010-ին՝ 27%-ի, իսկ 2011-ին՝ արդեն 38%-ի:




*Գծապատկեր 14*

## 5.2 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Իլխամ Ալիևի իշխանության երրորդ տարվանից՝ 2004-ից, Նախիջևանում սկսվեց արդյունաբերության մասնավորեցման գործընթացը: Արդյունքում՝ արդյունաբերությունում մասնավոր սեկտորի արտադրանքը 2003-ին 63%-ից 2016-ին դարձավ 96% (Գծապատկեր 14):




*Գծապատկեր 15*

Նախիջևանի արդյունաբերության որակական փոփոխության տարին է **2011**-ը: Այդ տարվա ընթացքում կտրուկ աճ տեղի ունեցավ արդյունաբերության բոլոր ոլորտներում:

Նախիջևանում արդյունաբերական արտադրանքի ծավալում **գերակա** ուղղություններն են.

- **ոչ մետաղական հանքերի շահագործումը** (կազմում է Նախիջևանի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի **38%-ը**) և
- **սննդի, խմիչքի և ծխախոտի արտադրությունը** (**30%**):

Նշենք, որ դրանք ապրանքային կատեգորիաներ են, այլ ոչ թե ապրանքատեսակներ: Այսինքն՝ տարաբաժանել այդ տվյալներով «խմիչքը» «սննդից» հասանելի տվյալների շրջանակում հնարավոր չէ:

Երկրորդ խումբն են կազմում.

- **ռետինե և պլաստմասսայե իրերի արտադրությունը (8%),**
- **փայտամշակումը (5%),**
- **մետաղամշակումը (4%),**
- **կարի արտադրությունը (4%):**




*Գծապատկեր 16*

Նախիջևանի արդյունաբերության հիմնական ճյուղերում արտադրանքի ծավալի դինամիկան դոլարային արտահայտությամբ տրված է Գծապատկեր 17-ում:

Գծապատկերից երևում է 2015-2016-ին մանաթի արժեզրկման խիստ բացասական ազդեցությունը Նախիջևանի արդյունաբերության վրա: Եթե 2014-ին ոչ մետաղական հանքերի շահագործումից ստացվել է 443 միլիոն դոլար, ապա 2016-ին այն դարձել է 202 միլիոն դոլար՝ նվազելով ավելի քան երկու անգամ: Սննդի, խմիչքի և ծխախոտի ոլորտների արտադրանքի ծավալը 320 միլիոն դոլարից նվազել է մինչև 157 միլիոն դոլար, նվազել է երկու անգամ:

*Նախիջևանի տնտեսության հետագա հետազոտական աշխատանքների կարևոր ուղղություն է արդյունաբերության նշված երկու ճյուղերի ավելի*

*մանրամասն կառուցվածքի բացահայտումը, քանի որ դրանք են կազմում Նախիջևանի հիմնական արտահանումը։*




*Գծապատկեր 17*

## 5.3 ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄԸ

Նախիջևանի արդյունաբերության ամբողջական ընկալման համար կարևոր է բացահայտել արդյունաբերական ձեռնարկությունների աշխարհագրական տեղաբաշխումը։ Ստորև տրված է դրա նախնական պատկերը, որն ունի լրամշակման կարիք։

### 5.3.1 Օգտակար հանածոներ

Օգտակար հանածոների հանքավայրերից կարևոր նշանակություն ունեն Նախիջևան քաղաքի մերձակայքի **աղի հանքերը**։

**Պարագաչայի** (Օրդուբադի շրջան) մոլիբդենի հանքերը, որոնք Քաջարանի մոլիբդենային հանքերի շարունակությունն են, ինչպես նաև բազմամետաղային (կապարի-ցինկի) հանքերը։

Ոսկու և բազմամետաղային հանքեր կան Օրդուբադի շրջանի Այգուրտ, Պիյազբաշի, Բաշքենդ, Նասիրվազ բնակավայրերի մերձակայքում։

### 5.3.2 Էներգետիկա

Նախիջևանում Արաքս գետի վրա գործում է Իրանի հետ համատեղ կառուցված և շահագործվող երկու հէկ՝ 44 մվտ ընդհանուր հզորությամբ։

Գործում է Օրդուբադի հէկ-ը։

Առկա է Վայխիրի ջրանցքը։ Նախատեսվում է կառուցել ամբարտակ Արաքսի վրա։

Նախիջևանի էներգետիկական ապահովման համար կարևոր նշանակություն ունի Թուրքիայից և Իրանից ներմուծվող էլեկտրաէներգիան։ Բացի դրանից, Նախիջևանին էլեկտրաէներգիա է մատակարարվում Ադրբեջան – Վրաստան – Թուրքիա – Իրան երթուղով։

### 5.3.3 Մեքենաշինություն և մետաղամշակում

Գործում են Նախիջևանի էլեկտրատեխնիկական գործարանը և Շահբուզի ավտովերանորոգման գործարանը։

### 5.3.4 Թեթև արդյունաբերություն

Գործում են Շարուրի (նախկին Իլյիչովսկ) բամբակազտիչ գործարանը, Օրդուբադի մետաքսամանվածքային ֆաբրիկան, Նախիջևանի կարի ֆաբրիկան։

### 5.3.5 Սննդարդյունաբերություն

Սննդարդյունաբերության գործարաններ են գործում Նախիջևանում, Շահբուզում։

Գինու գործարաններ կան Ապրակունիսում։

Հանքային ջրերի գործարաններ՝ Բադամլի, Սիրաբի։

Նախիջևանում գործում են Նախիջևանի մսի կոմբինատը, Նախիջևանի կաթի գործարանը։

Օրդուբադում գործում է պահածոների գործարան։

Նախիջևանում գործում է ծխախոտի ֆերմենտացիոն գործարան։

### 5.3.6 Փայտամշակում

Նախիջևանի կահույքի ֆաբրիկա։

### 5.3.7 Շինանյութեր

Նախիջևանի երկաթբետոնե կոնստրուկցիաների գործարան, Նախիջևանի շինանյութերի կոմբինատ, Նախիջևանի ապակե տարաների գործարան։

# 6 ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

Նախիջևանում կապիտալ ներդրումների կառուցվածքի դինամիկայի դիտարկումը հավելյալ պատկերացում է տալիս Նախիջևանի սոցիալ-տնտեսական զարգացման բնույթի վերաբերյալ:

Գծապատկեր 18-ի տվյալներից բխում է, որ Նախիջևանում կապիտալ ներդրումներում բացարձակ գերակշռում են շինմոնտաժային աշխատանքները, մասնավորապես՝ 2008-2016-ին դրանք կազմել են ներդրումների 88-92%-ը: Իսկ ներդրումները մեքենաներում և սարքավորումներում նույն այդ տարիներին կազմել են 9-13%: Սա, մեծ հավանականությամբ, նշանակում է, որ Նախիջևանում տեղի է ունեցել հիմնականում նախկինից մնացած արտադրական և սոցիալական ենթակառուցվածքների վերականգնում:

> *2006-ին ներդրումներում մեքենաների և սարքավորումների մասնաբաժնի կտրուկ աճը կարող է դառնալ հատուկ ուսումնասիրության առարկա: Ներդրումների դիտարկումն ըստ արտադրական և ոչ արտադրական ոլորտների ցույց է տալիս, որ մեքենաներում և սարքավորումներում ներդրումները կատարվել են արտադրության ոլորտում (այլ ոչ թե, օրինակ, տրանսպորտի, շինարարության կամ գյուղատնտեսության ոլորտներում):*




*Գծապատկեր 18*

Կապիտալ ներդրումների կառուցվածքն ըստ արտադրական և ոչ արտադրական ոլորտների (Գծապատկեր 19) ցույց է տալիս, որ.

- **Նախիջևանում 2009-2016թթ. կապիտալ ներդրումներում առավել գերակա են եղել արտադրական ոլորտները:**

Կապիտալ ներդրումների դինամիկան ըստ արտադրական և ոչ արտադրական ենթաոլորտների տրված է Աղյուսակ 5-ում:




*Գծապատկեր 19*

| Տարի | Ընդամենը արտադրական ոլորտներ | Ընդամենը ոչ արտադրական ոլորտներ | Արտադրական ոլորտներ | | | | | | | Ոչ արտադրական ոլորտներ | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արդյունաբերություն | Գյուղատնտեսություն | Առևտուր և ծառայություններ | Շինարարություն | Տրանսպորտ | Կապ | Այլ արտադրական ոլորտներ | Բնակարանային շինարարություն | Առողջապահություն | Կրթություն | Պետ. Կառ. և տեղ. Ապ. | Այլ ծառայություններ |
| 2004 | 49.9 | 50.1 | 20.3 | 13.8 | 2.0 | 3.1 | 9.1 | 1.6 | 0.1 | 9.2 | 0.6 | 8.9 | 19.8 | 11.5 |
| 2005 | 56.9 | 43.1 | 40.0 | 6.7 | 2.1 | 2.7 | 4.0 | 1.4 | 0.2 | 9.1 | 1.7 | 7.4 | 16.2 | 8.5 |
| 2006 | 62.9 | 37.1 | 51.0 | 0.3 | 4.2 | 3.3 | 3.3 | 0.8 | | 9.2 | 9.1 | 6.0 | 8.2 | 4.6 |
| 2007 | 45.4 | 54.6 | 29.7 | 3.2 | 4.5 | 3.5 | 2.9 | 1.6 | 1.3 | 9.2 | 8.9 | 9.8 | 16.9 | 8.5 |
| 2008 | 44.2 | 55.8 | 22.0 | 3.6 | 4.1 | 2.6 | 10.7 | 1.2 | 1.1 | 10.0 | 9.9 | 7.3 | 18.7 | 8.8 |
| 2009 | 57.5 | 42.5 | 23.0 | 3.4 | 11.8 | 2.0 | 16.5 | 0.8 | 0.7 | 10.5 | 4.5 | 5.3 | 13.0 | 8.5 |
| 2010 | 52.7 | 47.3 | 22.7 | 3.4 | 10.4 | 1.9 | 13.6 | 0.7 | 0.7 | 18.5 | 3.9 | 5.3 | 11.1 | 7.8 |
| 2011 | 63.2 | 36.8 | 34.1 | 3.6 | 13.3 | 2.0 | 9.7 | 0.5 | 0.5 | 14.9 | 2.6 | 4.5 | 8.5 | 5.8 |
| 2012 | 67.4 | 32.6 | 34.5 | 3.4 | 18.4 | 1.9 | 8.7 | 0.5 | 0.4 | 13.4 | 2.2 | 4.4 | 7.3 | 4.9 |
| 2013 | 67.1 | 32.9 | 32.8 | 3.6 | 19.6 | 2.0 | 8.5 | 0.6 | 0.4 | 13.2 | 2.2 | 5.3 | 7.1 | 4.7 |
| 2014 | 56.8 | 43.2 | 28.0 | 3.3 | 15.7 | 1.6 | 7.6 | 0.6 | 0.5 | 21.9 | 2.3 | 6.2 | 7.9 | 4.4 |
| 2015 | 62.2 | 37.8 | 31.2 | 7.1 | 13.6 | 1.7 | 7.5 | 1.1 | 0.6 | 20.5 | 2.3 | 6.1 | 5.7 | 2.6 |
| 2016 | 62.0 | 38.0 | 29.9 | 7.9 | 13.1 | 2.6 | 7.3 | 1.2 | 0.5 | 21.3 | 2.3 | 5.7 | 5.4 | 2.8 |

*Աղյուսակ 5. Նախիջևանում արտադրական և ոչ արտադրական ենթաոլորտներում կապիտալ ներդրումների դինամիկան:*

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ կապիտալ ներդրումների կառուցվածքում գերակշռում է **արդյունաբերության** ոլորտը: 2011-2016թթ. այդտեղ է կատարվել բոլոր կապիտալ ներդրումների 28-35%-ը:

Կապիտալ ներդրումների երկրորդ գերակա ոլորտն է **բնակարանային շինարարությունը**, որը վկայում է Նախիջևանի բնակչության հետ կապված խնդիրների բարձր գերակայության մասին: 2009-2016թթ. ընթացքում բնակարանային շինարարությանն ուղղվող կապիտալ ներդրումների մասնաբաժինն աճել է 25-ից մինչև 57%: Նկատենք, որ այս ոլորտում ներդրումներն աճել են 2014-2016թթ. ընթացքում, որն ընդգրկում է մանաթի արժեզրկման երկու տարիները:

Կարելի է ենթադրել, որ **բնակարանային շինարարության ոլորտի գերակայության պահպանումը պայմանավորված է Նախիջևանում ժողովրդագրական վիճակի բարելավման նպատակով:**

# 7 ՏՐԱՆՍՊՈՐՏ

## 7.1 ԲԵՌՆԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

Նախիջևանում 2001-2016-ին բեռնափոխադրումների ծավալը մոնոտոն աճել է: Առավել արագ աճի տարիներն են եղել 2009-2013 թվականները (Գծապատկեր 20): Բեռնափոխադրումներն աճել են նույնիսկ 2015-2016թթ., երբ տնտեսական բոլոր ցուցանիշները նվազել են:

Ակնհայտ է, որ բեռնափոխադրումների աճը պայմանավորված է արդյունաբերության ծավալների և արտահանման ծավալների աճով: Հիմնական բեռներն են ոչ մետաղական հանքանյութը և գյուղատնտեսական ապրանքները:




*Գծապատկեր 20*

Նախիջևանում բեռնափոխադրումների 99%-ից ավելին կատարվում է ավտոմոբիլային տրանսպորտով (Աղյուսակ 6): Օդային տրանսպորտը բեռնափոխադրումներում համարյա նշանակություն չունի: 2016-ին այդ տրանսպորտի տեսակով իրականացվել է 7200 տոննա բեռնափոխադրում կամ բոլոր բեռնափոխադրումների 0.04%-ը: Երկաթուղային տրանսպորտը 2016-ին իրականացրել է բեռնափոխադրումների 0.3%-ը՝ տեղափոխելով ընդամենը մոտ 52000 տոննա բեռ:

Այնուամենայնիվ, հարկ է ուշադրություն դարձնել, որ 2011-2013թթ. տեղի է ունեցել երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների նշանակալի աճ՝ **18.3 անգամ** (Գծապատկեր 21): Այդ աճը հաղորդակցվում է տնտեսական մյուս ցուցանիշների հետ: 2014-ից տեղի է ունեցել երկաթուղային բեռնափոխադրումների կտրուկ անկում, ակնհայտ է, որ Ադրբեջանի և Նախիջևանի տնտեսական վիճակի անկման հետևանքով: Այնուամենայնիվ, նույնիսկ այդ անկումից հետո երկաթուղային բեռնափոխադրումների ծավալը 2014-ին մոտ 6 անգամ գերազանցել է 2010թ. մակարդակը:

| Տարի | Ընդա-մենը, տոննա | Երկաթու-ղային, տոննա | Օդային, տոննա | Ավտոմո-բիլային, տոննա | Երկաթու-ղային, % | Օդային, % | Ավտոմո-բիլային, % |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2001 | 4,597.5 | 5.2 | 6.3 | 4,586.0 | 0.1% | 0.1% | 99.7% |
| 2002 | 4,841.3 | 0.0 | 4.3 | 4,837.0 | 0.0% | 0.1% | 99.9% |
| 2003 | 5,949.1 | 8.3 | 3.8 | 5,937.0 | 0.1% | 0.1% | 99.8% |
| 2004 | 6,200.0 | 9.6 | 5.1 | 6,185.3 | 0.2% | 0.1% | 99.8% |
| 2005 | 7,041.2 | 1.9 | 6.5 | 7,032.8 | 0.0% | 0.1% | 99.9% |
| 2006 | 7,505.2 | 21.2 | 11.6 | 7,472.4 | 0.3% | 0.2% | 99.6% |
| 2007 | 8,041.5 | 17.4 | 6.3 | 8,017.8 | 0.2% | 0.1% | 99.7% |
| 2008 | 8,702.1 | 16.8 | 5.0 | 8,680.3 | 0.2% | 0.1% | 99.7% |
| 2009 | 9,723.0 | 20.0 | 3.7 | 9,699.3 | 0.2% | 0.0% | 99.8% |
| 2010 | 11,152.7 | 16.3 | 2.7 | 11,133.7 | 0.1% | 0.0% | 99.8% |
| 2011 | 12,717.3 | 298.3 | 5.3 | 12,413.7 | 2.3% | 0.0% | 97.6% |
| 2012 | 13,952.4 | 323.9 | 5.7 | 13,622.8 | 2.3% | 0.0% | 97.6% |
| 2013 | 15,280.2 | 298.7 | 5.5 | 14,976.0 | 2.0% | 0.0% | 98.0% |
| 2014 | 15,564.1 | 94.6 | 5.3 | 15,464.2 | 0.6% | 0.0% | 99.4% |
| 2015 | 15,898.3 | 88.3 | 6.4 | 15,803.6 | 0.6% | 0.0% | 99.4% |
| 2016 | 16,082.7 | 51.9 | 7.2 | 16,023.6 | 0.3% | 0.0% | 99.6% |

*Աղյուսակ 6. Բեռնափոխադրումների ծավալը Նախիջևանում, 1000 տոննա, 2001-2016*




*Գծապատկեր 21*

## 7.2 ՈՒՂԵՎՈՐԱՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ

Նախիջևանում ուղևորափոխադրումների 99.6%-ը կատարվում է ավտոմոբիլային տրանսպորտով, այսինքն՝ համընկնում է բեռնափոխադրումներում իրավիճակի հետ (Աղյուսակ 7)։ Սակայն երկաթուղային և ավիափոխադրումներում իրավիճակը ճիշտ հակառակն է։ Ուղևորափոխադրումների 0.3%-ն իրականացվում է օդային, իսկ 0.1%-ը՝ երկաթուղային տրանսպորտով։

Ավտոմոբիլային տրանսպորտի բացարձակ գերակշռումը լիովին հասկանալի է:

Օդային տրանսպորտի գերակշռումը երկաթուղայինի նկատմամբ պայմանավորված է նրա-նով, որ Նախիջևանից Ադրբեջան ուղևորությունները հնարավոր են օդային տրանսպորտով և անիմաստ են երկաթուղայինով:

Ուղևորափոխադրումների բացարձակ արժեքների դիտարկումը որոշակիացնում է դրանց դինամիկայի պատկերը (Գծապատկեր 22):

| Տարի | Ընդամենը, 1000 մարդ | Երկա-թուղի, 1000 մարդ | Ավիացիա, 1000 մարդ | Ավտոմո-բիլային, 1000 մարդ | Երկա-թուղի, % | Ավիացիա, % | Ավտոմո-բիլային, % |
|---|---|---|---|---|---|---|---|
| **2001** | 33,050.1 | 372.0 | 208.0 | 32,470.1 | 1.1% | 0.6% | 98.2% |
| **2002** | 33,245.3 | 432.0 | 206.3 | 32,607.0 | 1.3% | 0.6% | 98.1% |
| **2003** | 37,661.7 | 475.2 | 232.5 | 36,954.0 | 1.3% | 0.6% | 98.1% |
| **2004** | 38,411.9 | 169.0 | 266.4 | 37,976.5 | 0.4% | 0.7% | 98.9% |
| **2005** | 41,401.2 | 167.9 | 292.9 | 40,940.4 | 0.4% | 0.7% | 98.9% |
| **2006** | 43,549.6 | 116.9 | 337.4 | 43,095.3 | 0.3% | 0.8% | 99.0% |
| **2007** | 47,394.7 | 124.0 | 354.0 | 46,916.7 | 0.3% | 0.7% | 99.0% |
| **2008** | 52,408.8 | 146.0 | 257.6 | 52,005.2 | 0.3% | 0.5% | 99.2% |
| **2009** | 56,766.5 | 132.7 | 223.9 | 56,409.9 | 0.2% | 0.4% | 99.4% |
| **2010** | 66,684.5 | 139.0 | 133.4 | 66,412.1 | 0.2% | 0.2% | 99.6% |
| **2011** | 80,587.4 | 134.8 | 230.4 | 80,222.2 | 0.2% | 0.3% | 99.5% |
| **2012** | 87,428.9 | 121.7 | 251.9 | 87,055.3 | 0.1% | 0.3% | 99.6% |
| **2013** | 95,224.2 | 131.3 | 267.7 | 94,825.2 | 0.1% | 0.3% | 99.6% |
| **2014** | 96,934.8 | 133.8 | 275.2 | 96,525.8 | 0.1% | 0.3% | 99.6% |
| **2015** | 98,151.0 | 134.4 | 261.1 | 97,755.5 | 0.1% | 0.3% | 99.6% |
| **2016** | **100,129.0** | **148.3** | **279.0** | **99,701.7** | **0.1%** | **0.3%** | **99.6%** |

*Աղյուսակ 7*




*Գծապատկեր 22*

2001-2003-ին Նախիջևանում երկաթուղային ուղևորափոխադրումներն աճում էին և հասան տարեկան 475,000 մարդու։ 2004-ին երկաթուղային ուղևորափոխադրումների ծավալը կտրուկ անկում է ունեցել՝ հասնելով 169,000-ի։ Անհրաժեշտ է հավելյալ ուսումնասիրություն՝ վեր հանելու դրա պատճառները։ Դրանք կարող են լինել, օրինակ, երկաթուղային տոմսերի գների բարձրացումը, երկաթուղային ուղևորափոխադրումներին փոխարինող ավտոբուսային երթուղիների առաջացումը կամ այլ պատճառներ։ Երկաթուղային ուղևորափոխադրումները հասան իրենց նվազագույնին 2006-ին՝ 117,000 մարդ, որից հետո դանդաղ վերականգնում է տեղի ունեցել մինչև 148,000՝ 2016-ին։

Օդային ուղևորափոխադրումներն աճել են մինչև 2007-ը, երբ տեղափոխվել է 354,000 մարդ։ Հետո՝ 2008-2010-ին, դրանց ծավալը կրճատվել է մինչև 133,000, որից հետո սկսել է աճել՝ 2016-ին հասնելով 279,000 մարդու։ Կարելի է ենթադրել, որ **օդային ուղևորափոխադրումների աճը պայմանավորվել է տուրիզմի ծավալների աճով** (2012-ին Նախիջևանի հյուրանոցներում 2010-ի համեմատ կտրուկ աճել է ինչպես այցելուների, այնպես էլ հյուրանոցների «մարդ*գիշեր» ցուցանիշը, տե՛ս Գծապատկեր 26, էջ 34)։

- **Կարելի է ենթադրել, որ Նախիջևանում տուրիզմի զարգացումը, որն, ըստ մամուլի հաղորդագրությունների, հայտարարվել է գերակայություն, կշարունակի ավելացնել օդային ուղևորափոխադրումների քանակը։**

# 8 ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

2004-2008-ին Նախիջևանում ներմուծումը գերակշռում էր արտահանման նկատմամբ: Այդ տարիների առավելագույն բացասական սալդոն գրանցվել է 2006-ին՝ մոտ 90 միլիոն դոլար:




*Գծապատկեր 23*




*Գծապատկեր 24*

Սկսած 2009-ից՝ արտաքին առևտրաշրջանառության սալդոն դարձավ դրական, իսկ 2010-ից կտրուկ աճեց, և այդ աճը (դոլարային արտահայտությամբ) շարունակվեց մինչև 2016-ը, չնայած 2015-2016թթ. մանաթի կտրուկ արժեզրկմանը: Եթե 2010-ին Նախիջևանից արտահանումը կազմել է 211.7 միլիոն դոլար, իսկ արտաքին առևտրաշրջանառության սալդոն՝ 165.5 միլի-

ոն դոլար, ապա 2016-ին արտահանումը դարձել է 419 միլիոն դոլար, իսկ արտաքին առ-
ևտրաշրջանառության սալդոն՝ 375 միլիոն դոլար։

Ակնհայտ է, որ այդ ցուցանիշները Նախիջևանում արդյունաբերության գործունեության հե-
տևանք են։ Կրկնենք, որ Նախիջևանում 2011-ից կտրուկ ավելացել է ոչ մետաղական հանքերի
(հիմնականում շինանյութ) և գյուղմթերքների (սննդի, խմիչքի և ծխախոտի) արտադրությու-
նը։ Այդ աճը զուգորդվել է նաև 2011-2013թթ. երկաթուղային բեռնափոխադրումների կտրուկ
աճի հետ, որը թեև անկում է ունեցել 2014-2016-ին, սակայն, դատելով արտահանման ծավալ-
ներից, նվազել է երկաթուղու հասույթը, որը հավանաբար հաշվարկվել է արժեզրկված մանա-
թով (այդ տվյալները զեկույցում փոխակերպված են դոլարի)։

# 9 ՏՈՒՐԻԶՄ

Նախիջևանում 2006-2016-ին աճել է ժամանող զբոսաշրջիկների քանակը և 2016-ին հասել է 403,000 մարդու: Համեմատության համար նշենք, որ 2016-ին Հայաստան է ժամանել 1,259,657 զբոսաշրջիկ: Եթե ժամանող զբոսաշրջության ինտենսիվությունը սահմանենք որպես ժամանած զբոսաշրջիկների հարաբերություն բնակչության թվաքանակի հետ, ապա Նախիջևանի համար այդ ցուցանիշը կլինի 0.89, իսկ Հայաստանի համար՝ 0.43 կամ՝ համարյա կրկնակի պակաս:

Նախիջևանում արտագնա զբոսաշրջությունն աճել է շատ ավելի դանդաղ: Մասնավորապես, 2011-ին նրանց քանակը կազմել է 104,000, իսկ 2016-ին՝ 119,000:

Հարկ է նշել, որ համաձայն Իրանի հետ կնքված պայմանագրի, Նախիջևանի քաղաքացիներն իրավունք ունեն ամսական մեկ անգամ այցելել Իրան՝ գնումներ կատարելու համար, պայմանով, որ նրանք Նախիջևան են վերադառնալու նույն օրը:




*Գծապատկեր 25*

- **Դատելով մամուլի 2017-ի վերջի և 2018-ի հրապարակումներից՝ Ադրբեջանում տուրիզմի զարգացումը Նախիջևանում սահմանվել է որպես գերակայություն:**

Այդ տեսակետից արժե գնահատել Նախիջևանում հյուրանոցային ենթակառուցվածքների հզորությունը:

Նախիջևանում 2016-ին Նախիջևանում կար 21 հյուրանոց: Հյուրանոցներում տեղերի քանակը՝ 1,448: Հյուրանոցները 2016-ին զբաղված են եղել 87,333 մարդ*գիշեր, այսինքն՝ հյուրանոցային տեղերի զբաղվածությունը կազմել է մոտ 17%: Հետևաբար.

- **Նախիջևանում հնարավոր է էապես ավելացնել տուրիստների քանակն առանց նոր հյուրանոցային տեղերի ավելացման:**

Չի բացառվում, որ անհրաժեշտ է բարելավել հյուրանոցների հարմարավետությունը:

Նշենք, որ հյուրանոց ընդունված այցելուների քանակը և հյուրանոցների զբաղվածությունը («մարդ*գիշեր» ցուցանիշը) կտրուկ աճել են 2012-ին՝ առաջինը՝ 38,167-ից մինչև 59,061 (55%-

ով, իսկ երկրորդը՝ 56,100-ից 84,420 (50%-ով, Գծապատկեր 26)։ 2012-2016-ին այդ ցուցանիշ-ներն էական աճ չեն գրանցել։

Քանի որ այցերի «մարդ*գիշեր» ցուցանիշը 1.4 անգամ մեծ է այցելուների քանակից, կարելի է ենթադրել, որ հյուրանոցներում այցելուների կեսն անց են կացնում 1 գիշեր, իսկ մյուս կեսը՝ 2 գիշեր։




*Գծապատկեր 26*

# 10 ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## 10.1 ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

Ադրբեջանի Պետական վիճակագրական ծառայության կողմից հաղորդվող բնակչության քանակը փորձագետները համարում են ուռճացված: Նրանք այդ կարծիքը հիմնավորում են Ադրբեջանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընտրացուցակներում ընդգրկված 18 և ավելի տարեկանների քանակի և Ադրբեջանի Ազգային վիճակագրական ծառայության կողմից այդ նույն քանակի միջև տարբերություններով: Աղյուսակ 8-ի ձախ ենթաաղյուսակում տրված են 2008, 2009 և 2013թթ. Ադրբեջանի ԱՎԾ-ի և ԿԸՀ-ի կողմից հայտարարված 18 և ավելի տարիքի բնակչության քանակները[6]: Ենթաաղյուսակի նախավերջին տողում տրված է, թե ԱՎԾ տվյալների որ տոկոսն են կազմում ԿԸՀ տվյալները, վերջին տողում՝ «գերագնահատվածության» բացարձակ չափը:

Աղյուսակ 8-ի աջ ենթաաղյուսակում տրված են Ադրբեջանի և Նախիջևանի առկա բնակչության գնահատականները, որոնք հիմնված են ձախ ենթաաղյուսակի տվյալների վրա: 75.0%-ը ձախ ենթաաղյուսակում «ԿԸՀ/ԱՎԾ» գնահատականների միջին արժեքն է, որի հիման վրա գնահատվել է Ադրբեջանի և Նախիջևանի **առկա բնակչության** քանակը:

Եթե ենթադրենք, որ ա) Ադրբեջանի ամբողջ բնակչության քանակը, այդ թվում՝ մինչև 18 տարեկաններինը, գերագնահատված է նույն չափով, բ) այդ գերագնահատման չափը նույնն է եղել նաև 2017-ին, ապա Ադրբեջանի բնակչության քանակը, որը 2017-ին ԱՎԾ տվյալներով կազմել է 9,961,396, իրականում եղել է **7,471,047**, իսկ Նախիջևանինը՝ 449,100-ի փոխարեն՝ **336,825**:

| | **ԱՎԾ և ԿԸՀ պաշտոնական տվյալներ** | | | **Բնակչության ընդհանուր քանակի գնահատում** | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 18 և ավելի, Ադրբեջան, 2008 | 18 և ավելի, Ադրբեջան, 2009 | 18 և ավելի, Ադրբեջան, 2013 | | Ադրբեջան, ընդ. 2016 | Նախիջևան, ընդ. 2016 |
| **ԱՎԾ, մշտական բնակչություն պաշտոնական** | 6,170,000 | 6,440,000 | 6,438,000 | **Պաշտոնական տվյալներ** | 9,961,396 | 449,100 |
| **ԿԸՀ, ընտրացուցակներում ընդգրկված անձանց քանակը** | 4,865,002 | 4,588,000 | 4,829,888 | **Մոտարկված տվյալներ** | **7,471,047** | **336,825** |
| **ԿԸՀ/ԱՎԾ, %** | 78.8% | 71.2% | 75.0% | **ԿԸՀ/ԱՎԾ, Միջին տոկոս** | 75.0% | 75.0% |
| **ԱՎԾ - ԿԸՀ** | 1,304,998 | 1,852,000 | 1,608,112 | **ԱՎԾ - ԿԸՀ** | 2,636,840 | 118,879 |

*Աղյուսակ 8*

[6] Фальсификацией численности населения Азербайджана на 36% заинтересовались в ОБСЕ, но Баку уже не остановить, 18/09/2013, https://www.panorama.am/ru/news/2013/09/18/az-article/441904
Очередная фальсификация численности избирателей в Азербайджане: теперь разница составляет 1,8 млн. Человек, 19.12.2014, просмотры: 1446, http://www.yerkramas.org/article/85326/ocherednaya-falsifikaciya-chislennosti-izbiratelej-v-azerbajdzhane-teper-raznica-sostavlyaet-1-8-mln--chelovek/ocherednaya-falsifikaciya-chislennosti-izbiratelej-v-azerbajdzhane-teper-raznica-sostavlyaet-1-8-mln--chelovek

Կարելի է կատարել բնակչության թվաքանակի մեկ այլ գնահատում: Եթե ենթադրենք, որ Ադրբեջանում, ինչպես և ԽՍՀՄ եվրոպական մասի այլ երկրներում, ժողովրդագրական միտումները նույնն են եղել, այսինքն՝ 1990թ. համեմատ տեղի է ունեցել բնակչության 20%-ի կարգի կրճատում, ապա Ադրբեջանի բնակչության քանակը կարելի է գնահատել՝ հիմնվելով Հայաստանի տվյալների վրա: Աղյուսակ 9-ում տրված է այդ հարաբերակցությունը, որից բխում է, որ **Ադրբեջանի բնակչության քանակը կարելի է գնահատել 5,512,430 մարդ, իսկ Նախիջևանինը՝ 226,284 մարդ**:

| | 1990 մշտական | 2016 մշտական | 2016 առկա բնակչություն | Կրճատում՝ 1990-2016 |
|---|---|---|---|---|
| ՀՀ | 3,538,000 | 2,925,000 | **2,725,000**[7] | 23.0% |
| ԱՀ | 7,159,000 | 9,762,000 | **5,512,430** | 23.0% |
| ՀՀ/ԱՀ | 2.02 | 3.34 | 2.02 | - |
| Նախիջևան | 293,875 | 449,100 | **226,284** | 23.0% |

*Աղյուսակ 9*

Այսպիսով, կարող ենք ասել, որ Նախիջևանի առկա բնակչության գնահատականը գտնվում է [226,284; 336,825] միջակայքում:

- **Եթե որպես Նախիջևանի առկա բնակչության գնահատական ընդունենք ստացված երկու գնահատականների միջինը, ապա այն կկազմի 281,554 մարդ:**
- **Գնահատականի վերին և ներքին սահմանների հարաբերական չափը ±19.6% է, կամ ±55,270 մարդ:**
- **Ստացված գնահատականի ճշտության աստիճանը պետք է համարել անբավարար և, հետևաբար, Նախիջևանի (և Ադրբեջանի) առկա բնակչության քանակի գնահատականները կարիք ունեն հետագա ճշգրտման:**

Այս եզրակացություններից հետևում է, որ Ադրբեջանի ժողովրդագրության հարաբերական ցուցանիշները, որոնք հաշվարկվում են մշտական (դե-յուրե) բնակչության տվյալների հիման վրա (ինչպես և մնացած բոլոր երկրներում, այդ թվում նաև Հայաստանում), տալիս են իրավիճակի բավական շեղված պատկերացում: Դա շատ դժվարացնում է ժողովրդագրական վիճակի համեմատական վերլուծությունը:

Հետևաբար, Նախիջևանի ժողովրդագրական ցուցանիշները դիտարկելիս, կոպիտ սխալներից խուսափելու համար, յուրաքանչյուր ցուցանիշի դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել դրա հավաքագրման և հաշվարկի առանձնահատկությունները:

## 10.2 ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ստորև՝ Գծապատկեր 27, 1-7-ում, ներկայացված են Նախիջևանի և Հայաստանի բնակչության բնական աճի դինամիկան նկարագրող ցուցանիշները: Այդ ցուցանիշների հիման վրա հնարավոր է ճշգրտել Նախիջևանի առկա բնակչության թվաքանակը: Սակայն այդ աշխատանքը

[7] Տե՛ս Մանուկյան Ս.Ա., ՀՀ ժողովրդագրական վիճակը որպես կրիտիկական ենթակառուցվածք (հրապարակման փուլում է):

բավական աշխատատար է[8], որի պատճառով այն նախատեսվում է իրականացնել հետագայում:

Այնուամենայնիվ, բերված ցուցանիշների հիման վրա կարելի է կատարել մի քանի **որակական** եզրակացություններ:

Գծապատկեր 27-1-ից երևում է, որ Նախիջևանում 2014-ին, 2013-ի համեմատ կտրուկ անկում է ունեցել և՛ ծնունդների, և՛ մահերի քանակը: Դա կարող էր տեղի ունենալ միայն բնակչության կտրուկ նվազման հետևանքով: Իսկ պատերազմական և բնակլիմայական ֆորսմաժորների բացակայության պայմաններում, դա կարող է լինել բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի խիստ անկման հետևանքով:

Հետևաբար, պետք է ենթադրել, որ մանաթի փոխարժեքի մեծ անկումն առաջացրել է բնակչության մեծ արտահոսք Նախիջևանից: Դա ենթադրաբար կարող է լինել ընտանիքների միավորում արտասահմանում, երբ արտագնա աշխատողներն իրենց ընտանիքները տեղափոխում են աշխատանքային միգրացիայի երկիր:

Կարող է հարց առաջանալ՝ մանաթի խիստ արժեզրկումը տեղի է ունեցել 2015-ին, ինչո՞ւ է կրճատումն արտահայտվել 2014-ին: Այս հարցի պատասխանը ստանալու համար անհրաժեշտ է հավելյալ ուսումնասիրել մանաթի արժեզրկման դինամիկան ըստ ամիսների, մանաթի փոխարժեքի և ժողովրդագրական տվյալների հաղորդման մանրամասների հավելյալ և մանրակրկիտ ուսումնասիրության դեպքում:

Չի բացառվում, որ Ադրբեջանում տեղի է ունեցել բնակչության հաշվառման մեթոդաբանության փոփոխություն: Այս տեսակետից հարկ է ուշադրություն դարձնել, որ ցուցանիշների բացարձակ արժեքների անկման հետ միասին տեղի է ունեցել դրանց հարաբերական արժեքների անկում (Գծապատկեր 27-2), ինչը նշանակում է, որ հարաբերական ցուցանիշների հաշվարկի բազան (բնակչության համապատասխան խմբում անձանց քանակը) չի փոխվել:

Համանման փոփոխություններ են տեղի ունեցել նաև ամուսնությունների բացարձակ և հարաբերական արժեքների հետ (Գծապատկեր 27-4 և 6), սակայն ամուսնալուծությունների ցուցանիշները մնացել են «հարթ»:

Այսինքն՝ բերված տվյալներն անհրաժեշտ է ենթարկել մանրակրկիտ ոչ ստանդարտ քննական ժողովրդագրական վերլուծության:

[8] Պահանջվում է բնակչության թվաքանակների համեմատության համար բերված ցուցանիշների ստանդարտացման մեթոդաբանության մշակում:


1. Ծնունդները, մահերը և բնական աճը Նախիջևանում, մարդ
12 000
10 000
8 000
6 000
4 000
2 000
0
10 116
10 525
9 763
6 623
6 631
6 510
8 072
8 519
7 762
4 765
4 772
4 660
2 044
2 006
2 001
1 858
1 859
1 850
2010
2012
2013
2014
2015
2016
Ծնվածներ
Մահացածներ
Բնական հավելաճ


2. Ծնելիությունը, մահացությունը և բնական աճը Նախիջևանում
30,0
25,0
20,0
15,0
10,0
5,0
0,0
24,9
24,9
22,6
15,1
15,0
14,6
19,9
20,2
18,0
10,9
10,8
10,5
5,0
4,7
4,6
4,2
4,2
4,1
2010
2012
2013
2014
2015
2016
Ծնելիության ընդհանուր գործակիցը
Մահացության ընդհանուր գործակիցը
Բնական հավելաճի ընդհանուր գործակիցը


3. Ծնելիությունը, մահացությունը և բնական հավելաճը Հայաստանում
30,0
25,0
20,0
15,0
10,0
5,0
0,0
14,7
14,3
14,0
13,8
14,3
13,9
13,5
9,2
9,2
9,1
9,0
9,2
9,3
9,4
5,5
5,1
4,9
4,8
5,1
4,6
4,1
2010
2011
2012
2013
2014
2015
2016
Ծնելիության ընդհանուր գործակիցը
Մահացության ընդհանուր գործակիցը
Բնական հավելաճի ընդհանուր գործակիցը


4. Ամուսնություններն ու ամուսնալուծությունները Նախիջևանում
4 000
3 500
3 000
2 500
2 000
1 500
1 000
500
0
3 397
3 458
3 512
2 767
2 639
2 661
333
324
314
334
332
417
2010
2012
2013
2014
2015
2016
Ամուսնություններ
Ամուսնալուծություններ


5. Ամուսնություններն ու ամուսնալուծությունները Հայաստանում
25 000
20 000
15 000
10 000
5 000
0
17 984
19 706
19 063
18 363
18 912
17 603
16 294
2 997
3 188
3 250
3 756
4 496
3 670
3 648
2010
2011
2012
2013
2014
2015
2016
Ամուսնություններ
Ամուսնալուծություններ







*Գծապատկեր 27*

## 10.3 ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Նախիջևանում պաշտոնական տվյալներով քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը սկսած 2004-ից չի փոխվել՝ գյուղական բնակչությունը կազմել է 29%, իսկ քաղաքայինը՝ 71% (Գծապատկեր 28)։

Բազմաթիվ աղբյուրներ հաղորդում են, որ Նախիջևանում տեղի է ունենում ներքին միգրացիա՝ գյուղերից դեպի Նախիջևան քաղաք։ Սա նշանակում է, որ բնակչությունը տեղաշարժվելիս դուրս չի գրվում իր մշտական բնակության վայրից (ինչը հատկանշական է նաև Հայաստանի համար)։




*Գծապատկեր 28*

## 10.4 ՄԻԳՐԱՑԻԱ

Միգրացիայի վերաբերյալ պաշտոնական տվյալները չեն դիտարկվել, քանի որ դրանք հիմնված են պաշտոնական գրանցումների վրա, իսկ բնակչությունը հակված չէ պաշտոնապես հայտնել իր տեղաշարժերի մասին: Սա վերաբերում է ինչպես ներքին, այնպես էլ արտաքին միգրացիային: Այդ պատճառով միգրացիայի նկարագրությունը տրված է մամուլի հաղորդագրությունների վրա, կրում է **որակական** բնույթ, այսինքն դրանց հավաստիության մակարդակը խնդրահարույց է :

**Ներգաղթ Հայաստանից**. Նախիջևանում «շատ քիչ» են վերաբնակվել 1989-1991թթ. Հայաստանից արտագաղթած ադրբեջանցիները:

**Ներքին միգրացիան Նախիջևանում** տեղի է ունենում մեծ մասամբ լեռնային գյուղերից Նախիջևան քաղաք: Այդպիսի միգրացիա որոշ չափով նկատվում է նաև դաշտային գյուղերից:

**Նախիջևանից միգրացիան դեպի Ադրբեջան** տեղի է ունենում հիմնականում դեպի Ապշերոնյան տնտեսական շրջան (որն ընդգրկում է Բաքուն):

**Դեպի Թուրքիա.** Սկսած 1992-ից, երբ բացվեց Թուրքիան և Նախիջևանը կապող «Հույսի» կամուրջը, սկսվեց Նախիջևանի բնակչության արտագաղթը դեպի Թուրքիա: 90-ականներին ամեն տարի Թուրքիա արտագնա աշխատանքների էր մեկնում մոտ 70,000-90,000 մարդ:

Նախիջևանի տնտեսական զարգացման արդյունքում Թուրքիա արտագնա աշխատանքների մեկնող Նախիջևանի բնակիչների քանակն աստիճանաբար նվազել է: 2005-ին նրանց քանակը գնահատվել է մոտ 60,000, 2008-ին՝ մոտ 40,000, իսկ 2013-ին՝ մոտ 25,000:

Այդ տվյալներով ներկայացված միտման հավաստիությունը բարձր է, քանի որ այն հաղորդակցվում է Նախիջևանի տնտեսական զարգացման և նոր աշխատատեղերի բացման միտման հետ:

Չի բացառվում, որ արտագնա աշխատողների քանակի նվազման գործոնների շարքում է նաև Նախիջևանի բնակչության ընդհանուր նվազումը:

Առավել ինտենսիվ էր աշխատանքային միգրացիան դեպի Թուրքիա Շարուրի շրջանից: 2000-ականներից սկսվել է նախիջևանցիների արտագաղթը Թուրքիա՝ մշտական բնակության:

Նախիջևանի աշխատանքային միգրանտները դեպի ԱՊՀ երկրներ առավելապես մեկնում են **Ռուսաստան**: Այդ ուղղությունը նախընտրում է հիմնականում Օրդուբադի շրջանի բնակչությունը:

**Իրան**. Նախիջևանի և Իրանի միջև առկա է ճոճանակային միգրացիա: Իրանը թույլ է տալիս Նախիջևանի յուրաքանչյուր քաղաքացու ամսական մեկ անգամ այցելել Իրան՝ նույն օրը վերադառնալու պայմանով:

Ինչպես և ամենուր, Նախիջևանից միգրանտների նշանակալի հատվածը երիտասարդ տղամարդիկ են, ինչը վատթարացնում է բնակչության բնական վերարտադրության ցուցանիշները: Մասնավորապես, նվազել է ամուսնությունների հարաբերական քանակը: Ընդ որում, չամուսնացածների շրջանում գերակշռում են կանայք:

Ըստ մամուլի հրապարակումների, Նախիջևանում **աշխատանքային ռեսուրսների** պակաս կա, որը զգացվում է հատկապես Հայաստանի հետ սահմանամերձ տարածքներում (Սադարակ, Օրդուբադ)։

**Ադրբեջանը** վարում է մասնագիտական կադրերով համալրման քաղաքականություն դեպի սահմանամերձ և լեռնային շրջաններ, այդ թվում՝ Նախիջևան։ Որպես խթան կիրառվում են բնակարանով ապահովումը և դրամական հավելումները։

Ըստ պաշտոնական տվյալների**, Ադրբեջանի տնտեսական տարածաշրջանների** համեմատ, Նախիջևանում առավել մեծ է բացասական միգրացիոն հարաբերական սալդոն (մեկնածների և ժամանածների տարբերությունը 1000 բնակչի հաշվով)։ Եթե միգրացիայի բացարձակ արժեքների դեպքում պաշտոնական տվյալներն ադեկվատ չեն, ապա միջտարածաշրջանային համեմատություններում այդ փաստը կարելի է համարել ադեկվատ։

Նախիջևանի շրջանների շարքում բացասական սալդոն ամենամեծն է Նախիջևան քաղաքում (-0.3), ավելի ցածր է Օրդուբադի, Շարուրի և Շահբուզի շրջաններում (-0.1), իսկ Բաբեկի, Կենգերլիի, Ջուլֆայի և Սադարակի շրջաններում 0 է։ Պաշտոնական տվյալների այս շարքն արտացոլում է այն հայտնի օրինաչափությունը, որ ցանկացած երկրից արտասահման միգրացիան հարաբերականորեն ավելի բարձր է տվյալ երկրի [մեծ] քաղաքներից և հարաբերականորեն ավելի ցածր՝ գյուղերից։

# 11 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

## 11.1 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Նախիջևանում պաշտոնական տվյալներով 2016-ին տնտեսապես ակտիվ բնակչությունը կազմել է 233,500 մարդ կամ պաշտոնապես հայտարարվող ամբողջ մշտական բնակչության 52%-ը: 2000-ի համեմատ այն աճել է 4%-ով, ինչը վկայում է բնակչության ծերացման մասին:

Գրանցված գործազուրկների քանակը 2007-ին կազմել է 5,598 մարդ , որը 2008-ին նվազել է մինչև 192, իսկ 2012-ից դարձել է 0: Այդ երևույթը ենթադրաբար պայմանավորված է գործազրկության նպաստի վերացմամբ (ինչը տեղի է ունեցել նաև Հայաստանում), որը որպես գործազուրկ գրանցվելու հիմնական դրդապատճառն է: Նախիջևանում Աշխատանքի միջազգային կազմակերպության սահմանմամբ հաշվառվող գործազրկության մասին տեղեկությունները, որոնք հաշվարկվում են զանգվածային հետազոտությամբ, բացակայում են:

Միաժամանակ, 2008-ից կտրուկ աճել է մասնավոր սեկտորում զբաղվածների թվաքանակը, որն ակնհայտորեն պայմանավորված է նրանով, որ գործազուրկներն անցել են չհաշվառվող տնտեսության հատված, մեծ մասամբ ինքնազբաղվածության, կամ վերածվել են տնտեսապես ոչ ակտիվ բնակչության, որը Նախիջևանի զբաղվածության ցուցանիշներում որպես կատեգորիա բացակայում է: Պաշտոնական տեսակետից նրանք վերածվել են զբաղվածների մասնավոր սեկտորում (Գծապատկեր 29):




*Գծապատկեր 29*

2007թ. Նախիջևանում կտրուկ աճել է նաև վարձու աշխատողների քանակը: Քանի որ պետական սեկտորում աշխատողների քանակը մնացել է նույն մակարդակին՝ մոտ 39,600 մարդ, ապա պետք է ենթադրել, որ 2007-ին տեղի է ունեցել զբաղվածության հետ կապված իրավական լուրջ փոփոխություն: Ենթադրաբար, ստվերից դուրս է բերվել մասնավոր սեկտորի որոշակի հատված:

## 11.2 ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Գծապատկեր 28-ում տրված է Նախիջևանում **վարձու աշխատողների** (պետական և մասնավոր սեկտորներում միասին) բաշխումն ըստ տնտեսության ճյուղերի: 2016-ին նրանց թվաքանակը կազմել է 94,423: Հետևաբար, ինքնազբաղվածների թվաքանակը պետք է համարել 137,077 (= 233,500- 96,423): Այդ թվաքանակում են պարփակված Նախիջևանից բացակայող 15-75 տարեկան [աշխատանքային ռեսուրսներ հանդիսացող] անձինք:

Առևտրի, շինարարության և մշակող արդյունաբերության ոլորտները վարձու աշխատատեղեր ունեցող առավել կարևոր ոլորտներն են, այս ոլորտներում զբաղված է վարձու աշխատողների մոտ 43.8%-ը (Գծապատկեր 30), իսկ կրթության ոլորտում՝ 15.7%-ը:

*Գծապատկեր 30*

Տնտեսության ճյուղերում վարձու աշխատողների բացարձակ քանակի դինամիկան տրված է Գծապատկեր 31-1, 2, 3-ում:










*Գծապատկեր 31*

Տվյալները ցույց են տալիս, որ զբաղվածների առավել մեծ թվաքանակը պարունակող առևտրի, շինարարության և մշակող արդյունաբերության ոլորտներում 2006-ից սկսվել է զբաղվածների թվաքանակի ինտենսիվ աճ, որը 2012-ից համարյա հասել է իր «հագեցման» վիճակին՝ զբաղվածների թվաքանակի ինտենսիվ աճը դադարել է:

Մյուս կողմից, կրթության ոլորտում, որը Նախիջևանում հիմնականում պարունակում է բյուջետային աշխատատեղեր, նույն այդ ժամանակահատվածում գրանցվել է զբաղվածների թվաքանակի նվազում: Սա, մասնավորապես, կարող է հետևանք լինել դպրոցներում աշակերտների թվաքանակի նվազման:

Նվազում է տեղի ունեցել 2010թ. նաև առողջապահության՝ նույնպես հիմնականում բյուջետային, ոլորտում (Գծապատկեր 31-2), որը կարող է հետևանք լինել ամբողջ բնակչության կրճատման:

Զբաղվածության փոքր հատվածները պարունակող ոլորտներից (Գծապատկեր 31-3) ինտենսիվ զարգացել է կացության և հանրային սննդի ոլորտը, որտեղ զբաղվածների թվաքանակը 2006-ին 738-ից 2011-ին հասել է 2,610-ի: Մյուս կողմից, անշարժ գույքի հետ գործառույթների ոլորտում զբաղվածների թվաքանակը 2009-ին 2,571-ից նվազել է մինչև 494՝ 2010-ին: Սա վկայում է անշարժ գույքի շուկայում առքուվաճառքի ինտենսիվության նվազում, որը կարող է պայմանավորված լինել արտագաղթի տեմպերի նվազմամբ, որը հետևանք է սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման: Չի բացառվում նաև, որ այդ ոլորտում տեղի են ունեցել կանոնակարգումներ, որի հետևանքով կրճատվել է այդ ոլորտում գործող ձեռնարկությունների թվաքանակը:

## 11.3 ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐ

Նախիջևանում բացվող աշխատատեղերի դինամիկան (Գծապատկեր 32, 1-5) թույլ է տալիս բացահայտել տնտեսության զարգացման առանձնահատկությունները:

2004-2008-ին Նախիջևանում տարեկան բացվել է 6,500-8,500 նոր աշխատատեղ (Գծապատկեր 32-1): Փակված աշխատատեղերի մասին վիճակագրությունը բացակայում է: Այս փուլում զբաղվածության ապահովման հիմնական ձևերն էին՝ տարբեր պետական նախագծերի շրջանակներում ժամանակավոր աշխատատեղերի ստեղծումը (Գծապատկեր 32-5), նոր ստեղծվող ձեռնարկությունները (Գծապատկեր 32-2) և անհատ ձեռներեցների քանակի աճը (Գծապատկեր 32-4):

2009-2011-ին աշխատատեղերի բացումը սկսեց նվազել բոլոր հիմնական բաղադրիչներով՝ տարեկան կազմելով 3,600-4,600 աշխատատեղ:

Սակայն 2012թ. տեղի ունեցավ աշխատատեղերի ստեղծման կտրուկ աճ: Այն պայմանավորված էր Նախիջևանում խորհրդային ժամանակներից մնացած ձեռնարկությունների վերագործարկմամբ և վերակառուցմամբ: Այդ ձեռնարկություններում 2012-ին ստեղծվել է 5,900 աշխատատեղ:

Նավթի գների անկման շրջանում 2015-2016թթ. աշխատատեղերի ստեղծման հիմնական ոլորտը դարձավ անհատ ձեռներեցների քանակի աճը: Պետական նախագծերի և նոր ձեռնարկությունների պոտենցիալը համարյա սպառվեց: Պետք է ենթադրել, որ այդ տարիներին ձեռնարկությունների փակվող աշխատատեղերի անցումն անհատ ձեռներեցների շարքը կարող է լինել ֆիկտիվ, քանի որ Նախիջևանում գործազուրկ են համարվում նրանք, ովքեր գրանցված են զբաղվածության կենտրոններում:
















*Գծապատկեր 32 1-4*

Իսկ այդտեղ, սկսած 2012-ից, այլևս գրանցված գործազուրկներ չկան: Այսինքն՝ անհատ ձեռներեցների կազմում պարփակված է թաքնված գործազրկությունը:

Ըստ մամուլի հրապարակումների, Նախիջևանում առկա է **որակյալ** աշխատուժի պակաս:

# 12 ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐ

Նախիջևանում նվազագույն աշխատավարձի չափը 2004-2013-ին աճել է 20-ից մինչև 134 դոլար (Գծապատկեր 33)։ 2017-ի հունվարի 1-ից այն սահմանվել է 116.0 մանաթ, որն այդ տարվա դոլարի փոխարժեքով համարժեք է 68 դոլարի։




*Գծապատկեր 33*







*Գծապատկեր 34*

Անվանական միջին ամսական աշխատավարձը Նախիջևանում 2004-2015-ին արագ աճ է ունեցել (Գծապատկեր 34-1)՝ 69 դոլարից հասնելով համարյա 500 դոլարի։ Սակայն 2017-ին այն նվազել է մինչև 245 դոլար։

- **Միջին անվանական ամսական աշխատավարձը Նախիջևանում միշտ եղել է ավելի ցածր, քան Ադրբեջանում (Գծապատկեր 34-2) և կազմել է վերջինի 2012-2017թթ. միջինի 87%-ը:**

Նշենք, որ.

- **Հայաստանում անվանական միջին ամսական աշխատավարձերը դոլարային արտահայտությամբ 2012-2014-ին ավելի ցածր էին և՛ Նախիջևանի, և՛ Ադրբեջանի ցուցանիշներից, սակայն 2017-ին այն գերազանցում էր Ադրբեջանի ցուցանիշը 42%-ով, իսկ Նախիջևանինը՝ 64%-ով:**

Տնտեսության ոլորտներում ամսական անվանական միջին աշխատավարձերը էապես տարբերվում են: Եթե Նախիջանում այդ ցուցանիշն ընդունենք 100 միավոր, ապա ֆինանսական ոլորտում միջին աշխատավարձը գերազանցում է հանրապետական միջինը 2.2 անգամ, պետական կառավարման ոլորտում՝ 35%-ով, առևտրում՝ 30%-ով, գյուղատնտեսությունում (գյուղմթերք արտադրող ձեռնարկություններում և անտառային տնտեսության ձեռնարկություններում)՝ 26%-ով, կենցաղի և հանրային սննդի ձեռնարկություններում՝ 23%-ով:




*Գծապատկեր 35*

Այսինքն.

- **Նախիջևանում հարաբերականորեն ավելի բարձր են միջին աշխատավարձերն այն ոլորտներում, որոնք կարևոր են տուրիզմի զարգացման համար։**

Նախիջևանում հարաբերականորեն ավելի ցածր են աշխատավարձերը ջրամատակարարման և կոյուղաջրերի հեռացման, առողջապահության և սոցիալական ծառայությունների ոլորտներում՝ կազմելով հանրապետական միջինի 50%-ը, ժամանցի, մշակույթի և զվարճությունների կազմակերպման ոլորտում՝ հանրապետական միջինի 60%-ը, ինչպես նաև հեռահաղորդակցության և կապի ոլորտում՝ հանրապետական միջինի 66%-ը։

# 13 ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

## 13.1 ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ

Նախիջևանի շրջանների և Նախիջևան քաղաքի համեմատությունն ըստ 2016թ. տնտեսական ցուցանիշներն ըստ ծավալի կամ բացարձակ արժեքների տրված է Աղյուսակ 10-ում:

Ընդհանուր հայացքն աղյուսակին ցույց է տալիս, որ ծավալային ցուցանիշների պատկերը, որպես կանոն, կրկնում է բնակչության չափի պատկերը: Որքան մեծ է բնակչության քանակը, այնքան ավելի բարձր է ցուցանիշը:

Տվյալները ցույց են տալիս, որ Նախիջևան քաղաքը դիտարկված տնտեսական ցուցանիշնե-րով նշանակալիորեն գերազանցում է բոլոր շրջաններին:

Ցուցանիշների ծավալով առանձնանում են Շարուրի և Բաբեկի շրջանները, որոնցից հետո առավել բարձր ցուցանիշներ ունի Օրդուբադի շրջանը: Տնտեսական ցուցանիշների ծավալով ամենափոքրն է Սադարակի շրջանը:

| Ինդիկատոր | Նախ. ք. | Շարուր | Բաբեկ | Օրդու-բադ | Ջուլֆա | Կենգերլի | Շահբուզ | Սադա-րակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տարածքը | 0% | 15% | 17% | 18% | 19% | 13% | 15% | 3% |
| Բնակչությունը | 21% | 25% | 17% | 11% | 10% | 7% | 6% | 3% |
| **Տրանսպորտ** | | | | | | | | |
| Բեռնափոխադրումներ | 38% | 12% | 13% | 9% | 10% | 8% | 7% | 3% |
| Ուղևորափոխադրումներ | 49% | 14% | 13% | 9% | 8% | 2% | 5% | 1% |
| Տրանսպորտային ծառայությունների ծավալը, դոլար | 50% | 10% | 10% | 8% | 8% | 5% | 6% | 3% |
| **Արդյունաբերություն** | | | | | | | | |
| Արդյունաբերության ծավալը | 73% | 10% | 12% | 1% | 1% | 2% | 1% | 0% |
| Արդյուն. աճի տեմպը, 2015- համեմատ | 101.9 | 101.1 | 101.3 | 101 | 101 | 101.1 | 101.1 | 101 |
| Աշխատողների քանակը արդյունաբերությունում | 44% | 20% | 18% | 4% | 5% | 4% | 3% | 2% |
| Միջին աշխատավարձը, $, Ընդ. 371 | 416 | 358 | 335 | 344 | 309 | 299 | 304 | 280 |
| Միջին աշխատավարձը, Նախ. ք. = 1 | 100% | 86% | 80% | 83% | 74% | 72% | 73% | 67% |
| **Առևտուր** | | | | | | | | |
| Մանրածախ առևտրաշրջանառություն | 44% | 23% | 9% | 6% | 7% | 4% | 3% | 3% |
| Մանրածախ առևտրաշրջանառության աճը նախորդ տարվա համեմատ | 102.1 | 102.1 | 102 | 102.2 | 101.9 | 102.3 | 101.4 | 101.7 |
| Վճարովի ծառայություններ | 30% | 23% | 15% | 9% | 8% | 8% | 5% | 2% |
| Վճարովի ծառ. աճը 2015-ի համեմատ | 103.2 | 103.2 | 103.1 | 103 | 103.4 | 102.9 | 103.3 | 102.6 |
| Կենցաղային ծառայությունների բաշխումը | 30% | 21% | 15% | 9% | 9% | 8% | 5% | 2% |
| Ապրանքաշրջանառությունը | 34% | 23% | 12% | 9% | 10% | 5% | 4% | 3% |

*Աղյուսակ 10. Նախիջևանի շրջանների և Նախիջևան քաղաքի ըստ ծավալի և բացարձակ չափերի տնտեսական ցուցանիշների համեմատական աղյուսակ, 2016թ.*

## 13.2 ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՔԱՆԱԿԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ

Աղյուսակ 11-ում տրված են վերը դիտարկված ցուցանիշները մեկ բնակչի հաշվով, որը ցույց է տալիս շրջանների միմյանց նկատմամբ հարաբերական զարգացության աստիճանը: Աղյու-սակի տվյալները ստացվել են Աղյուսակ 10-ի համապատասխան տողի տվյալները բաժանե-լով Աղյուսակ 10-ի բնակչության քանակը տողի համապատասխան տվյալների վրա: Օրինակ,

Աղյուսակ 11-ի «Արդյունաբերության ծավալը» տողում Նախիջան քաղաքի համար ստացված արժեքը՝ 348%, ստացվել է Աղյուսակ 10-ում Նախիջևան քաղաքի «Արդյունաբերության ծավալը» ցուցանիշը՝ 73%, բաժանելով Նախիջևան քաղաքի «Բնակչությունը» ցուցանիշին՝ 21%: Ստացված արդյունքը՝ 3.48, ներկայացված է տոկոսով:

| Ինդիկատոր | Նախ. ք. | Շարուր | Բաբեկ | Օրդու-բադ | Ջուլֆա | Կենգերլի | Շահբուզ | Սադա-րակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Տարածքը | | | | | | | | |
| Բնակչության խտություն | - | 167% | 100% | 61% | 53% | 54% | 40% | 100% |
| **Տրանսպորտ** | | | | | | | | |
| Բեռնափոխադրումներ | 181% | 48% | 76% | 82% | 100% | 114% | 117% | 100% |
| Ուղևորափոխադրումներ | 233% | 56% | 76% | 82% | 80% | 29% | 83% | 33% |
| Տրանսպորտային ծառայությունների ծավալը, դոլար | 238% | 40% | 59% | 73% | 80% | 71% | 100% | 100% |
| **Արդյունաբերություն** | | | | | | | | |
| Արդյունաբերության ծավալը | 348% | 40% | 71% | 9% | 10% | 29% | 17% | 0% |
| Արդ. աճի տեմպը, 2015- համեմատ | 101.9 | 101.1 | 101.3 | 101.0 | 101.0 | 101.1 | 101.1 | 101.0 |
| Աշխատողների քանակը արդյունաբերությունում | 210% | 80% | 106% | 36% | 50% | 57% | 50% | 67% |
| Միջին աշխատավարձը, $, Ընդ. 371 | 416 | 358 | 335 | 344 | 309 | 299 | 304 | 280 |
| Միջին աշխատավարձը, Նախ. ք. = 1 | 100% | 86% | 80% | 83% | 74% | 72% | 73% | 67% |
| **Առևտուր** | | | | | | | | |
| Մանրածախ առևտրաշրջանառություն | 210% | 92% | 53% | 55% | 70% | 57% | 50% | 100% |
| Մանրածախ առևտրաշրջանառության աճը նախորդ տարվա համեմատ | 102.1 | 102.1 | 102 | 102.2 | 101.9 | 102.3 | 101.4 | 101.7 |
| Վճարովի ծառայություններ | 143% | 92% | 88% | 82% | 80% | 114% | 83% | 67% |
| Վճարովի ծառ. աճը 2015-ի համեմատ | 103.2 | 103.2 | 103.1 | 103 | 103.4 | 102.9 | 103.3 | 102.6 |
| Կենցաղային ծառայությունների բաշխումը | 143% | 84% | 88% | 82% | 90% | 114% | 83% | 67% |
| Ապրանքաշրջանառությունը | 162% | 92% | 71% | 82% | 100% | 71% | 67% | 100% |

*Աղյուսակ 11. Նախիջևանի շրջանների և Նախիջևան քաղաքի մեկ բնակչի հաշվով տնտեսական ցուցանիշների համեմատական աղյուսակ, 2016թ.*

Այս ցուցանիշների շրջանակում նորից Նախիջևան քաղաքը մնում է առավել զարգացածը, որին հետևում են Շարուրի և Բաբեկի շրջանները: Սակայն մյուս շրջաններում հայտնաբերվում են ոլորտներ, որոնց զարգացության աստիճանը մեկ բնակչի հաշվով ավելի բարձր է, քան բացարձակ արժեքները դիտարկելիս:

Օրինակ՝ Սադարակի և Շահբուզի շրջաններում տրանսպորտային ծառայությունների ծավալը դոլարային արտահայտությամբ մեկ շնչի հաշվով ավելի բարձր է, քան մնացած բոլոր շրջաններում, բացի Նախիջևան քաղաքից:

Կամ՝ Սադարակի շրջանում մանրածախ առևտրաշրջանառությունը և ընդհանուր ապրանքաշրջանառությունը բացարձակ ծավալով ամենափոքրն են (Աղյուսակ 10), սակայն մեկ շնչի հաշվով նույն ցուցանիշները զիջում են միայն Նախիջևան քաղաքին:

# 14 ՀԵՏԱԳԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Նախիջևանի սոցիալ-տնտեսական վիճակը և դրա դինամիկան 2001-2016թթ.» զեկույցի արդյունքների հիման վրա «Նորավանք» Գիտակրթական հիմնադրամի Փորձագիտական խորհրդի կողմից սահմանվել են Նախիջևանի վերաբերյալ հետագա հետազոտական ուղղություններ, որոնք, խորհրդի կարծիքով, կընդլայնեն և կխորացնեն զեկույցի բովանդակությունը և կարող են օգտակար լինել ՀՀ Պետական կառավարման համապատասխան մարմինների համար։

Ստորև տրված են այդ հետազոտական ուղղությունները։

1. Շարունակել Նախիջևանի ընդհանուր վիճակի գնահատումը, մասնավորապես սոցիալական ոլորտներում՝ **առողջապահություն**, **կրթություն**, **մշակույթ**, **սոցիալական** ապահովում։
2. Ավելացնել **գների դինամիկայի** ուսումնասիրությունը։
3. Մանրամասն ուսումնասիրել **գյուղատնտեսության ոլորտը։**
4. Իրականացնել **Նախիջևանի համեմատությունն Ադրբեջանի մյուս տնտեսական տարածաշրջանների հետ**։ Այդ համեմատությունը վեր կհանի Նախիջևանի առավել թույլ կողմերը և կճշգրտի Նախիջևանի ռազմավարական գերակայության գնահատականն Ադրբեջանի համար։
5. Անհրաժեշտ է բացահայտել զեկույցում ներկայացված վիճակագրական տվյալների **հիմնական արդյունքների կոնկրետ բովանդակությունը**։
6. Նախիջևանի համար լուրջ խնդիր է **Հայաստանի հետ սահմանակից գյուղերի** ապաբնակեցվածությունը։ Հետազոտական խնդիր կարող են դառնալ **Հայաստանին սահմանակից կոնկրետ գյուղերի նույնականացումը և դրանց առնչությունը սահմանների պաշտպանության հետ**։
7. Քանի որ գյուղերի ապաբնակեցումը լուրջ խնդիր է Նախիջևանի համար, իսկ գյուղատնտեսական մթերքի մշակումը՝ մշակող արդյունաբերության կարևորագույն ուղղություն, հետևաբար, Նախիջևանում **գյուղատնտեսության վիճակը** և դրա զարգացման պոտենցիալի գնահատումը կարևոր խնդիր են։
8. Անհրաժեշտ է գնահատել Նախիջևանի **էներգետիկայի հիմնական ցուցանիշները** և կառուցվածքը, մասնավորապես՝ դրա ինքնաբավության մակարդակը և տնտեսության համար զարգացման անհրաժեշտ հզորությունների առկայությունը։
9. Անհրաժեշտ է շարունակել փնտրել տվյալներ, որոնք կհստակեցնեն Նախիջևանում **բնակչության քանակի** գնահատականը։ **Այդ ցուցանիշը հանգուցային նշանակություն ունի ժողովրդագրական և սոցիալական վիճակագրության մնացած ցուցանիշների** ճշգրտման համար։
10. Խորացնել **Նախիջևանում ներդրումների կառուցվածքի և դրա դինամիկայի ուսումնասիրությունը**, այդ թվում նաև ըստ Նախիջևանի առանձին շրջանների։ Այդ ուսումնասի-

ությունը, այլ արդյունքների հետ միասին, ունակ է հավելյալ տեղեկություններ հաղորդել Նախիջևանում ժողովրդագրական և սոցիալական վիճակի վերաբերյալ։

11. Առանձին հետազոտության առարկա պետք է լինեն **Նախիջևանի կարևորագույն արդյունաբերական ոլորտները և ձեռնարկությունները, դրանց զարգացման պոտենցիալի գնահատականը**։

12. Այս կոնտեքստում հարկ է ուշադրության կենտրոնում ունենալ **Ադրբեջան – Իրան – Նախիջևան – Թուրքիա երկաթուղու** կառուցման գաղափարի (նախագծի) վիճակը և զարգացման միտումները։ Այդ գաղափարի իրականացման հավանականությունը պետք է դարձնել փորձագիտական գնահատման առարկա։

13. Նախիջևանի **օգտակար հանածոների պաշարների և շահագործման հետազոտություն**։ Այդ հետազոտությունը հաղորդակցվում է տրանսպորտի, մասնավորապես երկաթուղու, էներգետիկայի և զբաղվածության, ընդհանուր սոցիալական վիճակի և ժողովրդագրական վիճակի հետ։

14. Քանի որ Նախիջևանի արդյունաբերության 70%-ից ավելին կենտրոնացված է Նախիջևան քաղաքում, անհրաժեշտ է **Նախիջևան քաղաքի առանձին հետազոտություն**։

15. Նախիջևանի **արտահանման և ներմուծման բնամթերային կառուցվածքի և արտահանման ուղղությունների** (ինչ է արտահանվում Թուրքիա և ինչը՝ Իրան) **ուսումնասիրություն**։ Այն հաղորդակցվում է տնտեսության վիճակի և զարգացման ուղղությունների ու պոտենցիալի հետ։

ՀՀ պետական կառավարման մարմինների հետաքրքրության դեպքում «Նորավանք» ԳԿՀ-ն պատրաստակամ է շարունակել հետազոտություններն այն ուղղությամբ, որոնք կնշվեն այդ մարմինների կողմից։

# 15 ԱՄՓՈՓՈՒՄ

1. **Նախիջևանը Ադրբեջանի կազմում.** Նախիջևանի տարածքը՝ 5500 կմ², կազմում է Ադրբեջանի տարածքի 6.4%-ը, իսկ բնակչությունը՝ 4.6%-ը (2015թ. պաշտոնական տվյալներով)։ Նախիջևանը կազմված է 7 շրջանից։ Դրանցից Կենգերլիի շրջանը կազմավորվել է 2004թ.։

2. **Նախիջևանի զարգացման դինամիկան.** Նախիջևանի ՀՆԱ-ն 2017թ. կազմել է $1589 մլն. կամ Ադրբեջանի ՀՆԱ 4.1%-ը։ 2000-2017թթ. ընթացքում Ադրբեջանը ձգտել է համեմատաբար ավելի ինտենսիվ զարգացնել Նախիջևանը։




*Գծապատկեր 36*

Ինտենսիվ զարգացումն ունեցել է երեք փուլ (Գծապատկեր 36)։ Առաջինը՝ 2000-2004 թթ., երբ այն աճել է 1.8%-ից մինչև 2.7%, երկրորդը՝ 2009-2014 թթ., երբ քառամյա անկումից հետո այն աճել է 2.7%-ից մինչև 4.1% և երրորդը՝ 2016-2017 թթ., երբ մանաթի արժեզրկմանը հետևած անկումից հետո այն աճել է 3.0%-ից մինչև 4.1%։
2000-2017 թթ. ընթացքում Նախիջևանի զարգացման հիմնական բովանդակությունն էր **արդյունաբերության** առաջանցիկ զարգացումը։
Չնայած 2015թ. նավթի գների անկումը և մանաթի արժեզրկումն էապես ազդել են Նախիջևանի տնտեսական և սոցիալական բոլոր ցուցանիշների վրա, սակայն **Ադրբեջանի համար Նախիջևանի զարգացման գերակայությունն չի փոխվել**։

3. **Նախիջևանի բյուջեն** 2016-ին կազմել է $205 մլն.։ Նախիջևանը դոտացիոն տարածաշրջան է՝ նրա բյուջեի 80%-ը ($164 մլն.) տրամադրում է Բաքուն։

   Նախիջևանում հարկային բեռը հիմնականում կրում է բնակչությունը, որը վճարում է բոլոր հարկային մուտքերի 92%-ը։ Անհատ ձեռներեցներից հավաքագրվող հարկերը կազմում են մուտքերի 3.1%-ը։ Իրավաբանական անձանց շահութահարկը կազմում է մուտքերի 1.2%-ը, ինչը վկայում է **Նախիջևանի տնտեսության ցածր արտադրողականության և ստվերի շատ մեծ ծավալի մասին**։

4. **Նախիջևանի ՀՆԱ կառուցվածքը**. ՀՆԱ ամենամեծ մասնաբաժինը պատկանում է մշակող արդյունաբերությանը՝ 27.8% և մեծածախ ու մանրածախ առևտրին՝ 25.8%։ Երրորդ նշանակալի ճյուղն է շինարարությունը՝ 20.7%, չորրորդը՝ գյուղատնտեսությունը՝ 11.2%։

   Նախիջևանը դասական ծայրամասային երկրամաս է։ Սակայն 2005-2016թ. այստեղ ամենաինտենսիվ զարգացող ոլորտը եղել է **արդյունաբերությունը**, որի մասնաբաժինը ՀՆԱ-ում այդ ժամանակահատվածում 8.2%-ից հասել է 27.8%-ի։ Նույն ժամանակահատվածում գյուղատնտեսության մասնաբաժինը 22.1%-ից նվազել է մինչև 11.2%։

5. **Արդյունաբերություն.** Նախիջևանում արդյունաբերության զարգացմանն է ուղղվում կապիտալ ներդրումների ամենամեծ հատվածը, որը **վերջին 6 տարիների ընթացքում կազմել է բոլոր կապիտալ ներդրումների մոտ 50%-ը**:

   2014-ին Նախիջևանի արդյունաբերության արտադրանքի ծավալը կազմել է $1137 մլն., որը մանաթի արժեզրկման պատճառով 2016-ին նվազել է մինչև $569 մլն.:

   Նախիջևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են.

   5.1. Ոչ մետաղական հանքերի շահագործումը՝ հիմնականում շինանյութի արտադրության համար (Նախիջևանում առկա են մոլիբդենի պաշարներ, սակայն դրանց արդյունահանման ծավալները շատ փոքր են): 2016-ին այդ ոլորտի արտադրանքը կազմել է մշակող արդյունաբերության ընդհանուր արտադրանքի 38%-ը: Իսկ արտադրանքի ծավալը 2010-ի համեմատ աճել է 3.4 անգամ՝ $129 մլն.-ից մինչև $443 մլն.:

   5.2. Սննդի և խմիչքի արտադրությունը 2016-ին կազմել է մշակող արդյունաբերության 30%-ը, 2010-2014-ին դրա ծավալն աճել է $102 մլն.-ից մինչև $320 մլն., կամ՝ 3.1 անգամ:

   5.3. Ռետինի և պլաստմասսաների արտադրությունը (2016-ին կազմել է մշակող արդյունաբերության 8%-ը) 2010-2016-ին աճել է $24 մլն.-ից մինչև $86 մլն. կամ՝ 3.6 անգամ:

6. **Արտահանում և ներմուծում.** Նախիջևանում մշակող արդյունաբերության զարգացման փուլին զուգահեռ զգալի աճել է արտահանումը: 2010-2016-ին արտահանումն աճել է $212 մլն.-ից մինչև $419 մլն. (Գծապատկեր 37-Ա): 2010-2016 թթ. արտաքին առևտրաշրջանառության սալդոն դարձել է դրական և ինտենսիվ աճել է (Գծապատկեր 37-Բ): Նշենք, որ 2014-2016-ի տնտեսական ճգնաժամը չի ազդել Նախիջևանի արտահանման ծավալի վրա:




*Գծապատկեր 37*

Չնայած վիճակագրական տվյալների բացակայությանը, տվյալների համադրումը, հատկապես՝ երկաթուղային բեռնափոխադրումների աճը, ցույց է տալիս, որ արտահանման կտրուկ աճը պայմանավորված է դեպի Իրան արտահանման աճով:

Նախիջևանում 2010-2014-ին կրկնակի աճել է նաև ներմուծումը՝ $46 մլն.-ից մինչև $109 մլն.: Սակայն ճգնաժամի հետևանքով ներմուծման ծավալը 2016-ին նվազել է մինչև 2010թ. մակարդակը:

7. **Տրանսպորտ.** Նախիջևանում ավտոմոբիլային տրանսպորտն ունի բացարձակ գերակա նշանակություն և՛ բեռնափոխադրումներում, որտեղ նրա մասնաբաժինը 99.6% է, և՛ ուղևորափոխադրումներում, նույնպես՝ 99.6%: Նախիջևանի զարգացման տեմպերի մասին է վկայում ավտոմոբիլային բեռնափոխադրումների հարատև աճը (Գծապատկեր 38-Ա):

Նախիջևանում տրանսպորտի ոլորտի հիմնական խնդիրն է երկաթուղու անբավարար օգտագործումը: Մասնավորապես, 2010 թ.-ին երկաթուղային բեռնափոխադրումները կազմել են բոլոր բեռնափոխադրումների 0.1%-ը (Գծապատկեր 38-Բ): Սակայն, 2011-ից, արդյունաբերության զարգացմանը համահունչ, երկաթուղային տրանսպորտի օգտագործումը 2010թ. համեմատ աճել է 18 անգամ և արդյունքում հասել ընդհանուր բեռնափոխադրումների 2.3%-ին:




*Գծապատկեր 38*

Չնայած 2014-ից երկաթուղային բեռնափոխադրումներն անկում են ունեցել, սակայն դրանք մնացել են մոտ 6 անգամ ավելի բարձր, քան 2010-ին: Երկաթուղային բեռնափոխադրումների աճը պայմանավորված է շինանյութի և գյուղատնտեսական մթերքի մշակման արդյունքների արտահանման կտրուկ աճով:
Մեծ հավանականությամբ Ադրբեջանը շարունակելու է երկաթուղային բեռնափոխադրումների դերի մեծացման քաղաքականությունը:

8. **Տուրիզմ.** Նախիջևանում հակված են տուրիզմը վերածելու տնտեսական զարգացման հիմնական ուղղություններից մեկին:




*Գծապատկեր 39*

2010-2011-ից կտրուկ աճել է դեպի Նախիջևան այցերի քանակը (Գծապատկեր 39), եթե 2008-ին այն կազմել էր 219 հազար այց, ապա 2016-ին արդեն՝ 403 հազար։ Պաշտոնական վիճակագրությունը չի մանրամասնում դրա կառուցվածքը։ Նախիջևանից դեպի դուրս այցերի քանակը քիչ է աճել՝ 2011-ին 104 հազարից հասել է 2016-ին՝ 119 հազարի։

9. **Ժողովրդագրություն**. Պաշտոնական տվյալներով՝ Նախիջևանի բնակչությունը 2017-ին կազմել է **449** հազար մարդ, որն անկախ փորձագետները համարումեն ուռճացված։ Կատարվել է Նախիջևանի բնակչության գնահատում՝ որի արդյունքում բնակչության քանակը գնահատվել է **281 ± 55 հազար** մարդ։
10. **Զբաղվածություն.** 2004-2008-ին Նախիջևանում բացվել է տարեկան 6500-8500 նոր աշխատատեղ (փակվող աշխատատեղերի մասին վիճակագրությունը բացակայում է)։ Այս փուլում զբաղվածության ապահովման հիմնական ձևերն էին տարբեր պետական նախագծերի շրջանակներում ժամանակավոր աշխատատեղերի ստեղծումը, նոր ստեղծվող ձեռնարկությունները և անհատ ձեռներեցների քանակի աճը։
    2009-2011-ին աշխատատեղերի բացումը սկսեց նվազել բոլոր հիմնական բաղադրիչներով՝ տարեկան կազմելով 3600-4600 աշխատատեղ։ Սակայն 2012թ. տեղի ունեցավ աշխատատեղերի ստեղծման կտրուկ աճ։ Այն պայմանավորված էր Նախիջևանում խորհրդային ժամանակներից մնացած ձեռնարկությունների վերագործարկմամբ և վերակառուցմամբ։ Այդ ձեռնարկություններում 2012-ին ստեղծվել է 5900 աշխատատեղ։
    Նավթի գների անկման շրջանում՝ 2015-2016թթ., աշխատատեղերի ստեղծման հիմնական ոլորտը դարձավ անհատ ձեռներեցների քանակի աճը։ Պետական նախագծերի և նոր ձեռնարկությունների ներուժը համարյա սպառվեց։
    Այդ տարիներին ձեռնարկությունների փակվող աշխատատեղերի անցումն անհատ ձեռներեցների շարքը կարող է լինել ֆիկտիվ, քանի որ Նախիջևանում գործազուրկ են համարվում նրանք, ովքեր գրանցված են զբաղվածության կենտրոններում։ Իսկ այդտեղ, սկսած 2012-ից, այլևս գրանցված գործազուրկներ չկան։ Այսինքն՝ անհատ ձեռներեցների կազմում պարփակված է թաքնված գործազրկությունը։
    Ըստ մամուլի հրապարակումների՝ Նախիջևանում առկա է **որակյալ** աշխատուժի պակաս։
11. **Սոցիալական զարգացում.** Սոցիալական ոլորտում կապիտալ ներդրումների գերակայությունն է բնակարանային շինարարությունը, որը վկայում է Նախիջևանում բնակչության խնդիրների բարձր գերակայության մասին։ 2009-2016թթ. ընթացքում բնակարանային շինարարությանն ուղղվող կապիտալ ներդրումների մասնաբաժինն աճել է 25%-ից մինչև 57%։
12. **Նախիջևանի շրջանների համեմատություն**. Արդյունաբերության, աշխատավարձերի, առևտրի և ծառայությունների ու տրանսպորտի զարգացման մակարդակով **Նախիջևան քաղաքը** և՛ բացարձակ, և՛ հարաբերական (1 շնչի հաշվով) գնահատականներով որակապես ավելի զարգացած է, քան մնացած շրջանները։ Այդ պատճառով էլ Նախիջևան քաղաքը ներքին միգրացիայի տեսակետից այն գրավիչ տարածք է։
    Դիտարկված ինդիկատորների տեսակետից ծավալային առումով առավել մեծ են **Շարուրի**, **Բաբեկի** և **Օրդուբադի** շրջանների մասնաբաժինները։ Սակայն հարաբերական զարգացածության ինդիկատորների դիտարկման դեպքում բեռնափոխադրումների և տրանսպորտային ծառայությունների ընդհանուր ծավալի տեսակետից համեմատաբար ավելի զարգացած են Կենգերլիի և Շահբուզի շրջանները, մանրածախ առևտուրն ավելի զարգացած է Սադարակի շրջանում, վճարովի ծառայությունները՝ Կենգերլիում, իսկ ընդհանուր ապրանքաշրջանառությունը՝ Ջուլֆայում։